

3051

Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

ԶԵԿՈՒՑՈՒՄ
ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ
ՍՍՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԿ 33

9-52

ՀԱՅԿՈՒՍԷՐԱՏ • 1937 • ՅԵՐԵՎԱՆ



14 JUN 2005

20 NOV 2000

3K33

2-52

պր.



Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

ՋԵԿՈՒՑՈՒՄ
ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3051

И. В. СТАЛИН
ДОКЛАД О ПРОЕКТЕ
КОНСТИТУЦИИ СОЮЗА ССР
Армпартиздат, Ереван, 1937



1402
37

Հայ քարգլ խմբ. Բ. Մարտիրոսյան յեկ 4. Դոնոյան
Թարգ. Յե. Տեր-Մինասյան
Տեխ. խմբ. Խաչատրյան Ս.
Սրբազրիչ Վ. Ջիդեյան
Կոնտր. սրբազրիչ Յե. Տեր-Մինասյան

Գլավիճտի լիազոր—Ի-2051, հրատ. № 508, պատվեր № 208:
Տիրաժ 50.000.

Հանձնված է արտադրության 21/X 1937 թ.
Ստորագրված է ապելու 23/XI 1937 թ.

Հայկուհրատի տպարան, Յերևան, Ալավերդյան 71

Ընկեր Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ
Խորհուրդների VIII Համամիութենական
Արևակարգ Համագումարում
ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

25 նոյեմբերի 1936 թ.

Ընկեր ՍՏԱԼԻՆԻ՝ տրիբունի վրա յերևալը դիմավորվում է ամբողջ դահլիճի յերկարատև փոքորկալի ովացիայով: Ամբողջ դահլիճը վոտֆի յե կանգնում: Բոլոր կողմերից հնչում են բացականչություններ՝ «Ուռա՛ ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ», «Կեցցե՛ ընկեր ՍՏԱԼԻՆԻՆԸ», «Կեցցե՛ Մեծ ՍՏԱԼԻՆԸ», «Մեծ հաննար ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ ուռա՛», «Վի՛վատ», «Ռոտ փրո՛նտ», «Փա՛ռֆ ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ»:

I ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՃՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԸՆԿԵՐՆԵՐ:

Սահմանադրական Հանձնաժողովը, վորի նախագիծը ներկայացված է այս Համադրութեան քննարկմանը, կազմվել է, ինչպէս հայտնի յէ, ԽՍՀ Միութեան Խորհուրդների VII Համադրութեան հատուկ վորոշման համաձայն: Այդ վորոշումն ընդունվել է 1935 թվի փետրվարի 6-ին: Նա ասում է.

«1. ԽՍՀ Միութեան Սահմանադրութեան մեջ փոփոխութեաններ մտցնել հետևյալ ուղղութեամբ.

ա) ընտրական սխտեմի հետագա դեմոկրատացման՝ վոչ լիովին հավասար ընտրութեանները հավասար ընտրութեաններով փոխարինելու իմաստով, բաղմաստիճան ընտրութեաններն՝ ուղղակի ընտրութեաններով, բաց ընտրութեանները՝ փակ ընտրութեաններով փոխարինելու իմաստով.

բ) Սահմանադրութեան սոցիալ-տնտեսական հիմքը ճշգրտելու ուղղութեամբ՝ Սահմանադրութեանը ԽՍՀՄ-ի դասակարգային ուժերի այժմյան փոխհարաբերութեանները հետ համապատասխանեցնելու իմաստով (նոր սոցիալիստական ինդուստրիայի ստեղծումը, կուլակութեան ջախջախումը, կոլտնտեսային կարգերի հաղթութեանը, սոցիալիստական սեփականութեան՝ վորպէս խորհրդային հասարակութեան հիմքի՝ հաստատումը և այլն):

2. Առաջարկել ԽՍՀ Միութեան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին՝ ընտրել Սահմանադրական Հանձնաժողով, վորին հանձնարարել առաջին կետում մատնանշված հիմունքներով մշակել Սահմանադրութեան ուղղված տեքստը և ներկայաց-

նել այն ԽՍՀ Միութեան Կենտրոնործկոմի նստաչրջանին ի հաստատութիւն:

3. ԽՍՀ Միութեան մեջ խորհրդային իշխանութեան մարմինների մոտակա հերթական ընտրութիւնները կատարել նոր ընտրական սխտեմի հիման վրա»:

Այս 1935 թվի փետրվարի 6-ին եր: Այս վորոշումն ընդունելուց մի որ հետո, այսինքն՝ 1935 թվի փետրվարի 7-ին, հավաքվեց ԽՍՀ Միութեան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Առաջին նստաչրջանը և, ի կատարումն ԽՍՀՄ-ի Խորհուրդների ՎՊ Համագումարի վորոշման, կազմեց 31 հոգուց բաղկացած Սահմանադրական Հանձնաժողով: Նա հանձնարարեց Սահմանադրական Հանձնաժողովին մշակել ԽՍՀՄ-ի ուղղված Սահմանադրութեան նախագիծ:

Սրանք են այն ձևական հիմունքները և ԽՍՀՄ-ի գերագույն մարմնի ղիրեկախիւնները, վորոնց հիման վրա իր աշխատանքը պետք է ծաղալեր Սահմանադրական Հանձնաժողովը:

Այսպիսով Սահմանադրական Հանձնաժողովը պետք է վորոշութիւններ մտցներ 1924 թվին ընդունված՝ այժմ գործող Սահմանադրութեան մեջ, ընդամին հաշիւ առնելով սոցիալիզմի ուղղութեամբ կատարված այն տեղաշարժերը ԽՍՀ Միութեան կյանքի մեջ, վորոնք իրականացվել են 1924 թվից մինչև մեր որերն ընկած ժամանակաշրջանում:

II

1924 ԹՎԻՑ ՄԻՆՉԵՎ 1936 ԹԻՎՆ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԶԱՆՈՒՄ ԽՍՀՄ-Ի ԿՅԱՆՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վորոնք են ԽՍՀՄ-ի կյանքում տեղի ունեցած այն վորոշութիւնները, վոր իրագործվեցին 1924 թվից մինչև 1936 թիւն ընկած ժամանակաշրջանում և վորոնք պետք է արտացոլեր Սահմանադրական Հանձնաժողովը Սահմանադրութեան իր նախագիծում:

Վորն է այդ վորոշութիւնների ելութիւնը:

Ի՞նչ ունեյինք մենք 1924 թվին:

Դա ՆԵՊ-ի առաջին շրջանն էր, յերբ Խորհրդային իշխանութիւնը թույլ տվեց կապիտալիզմի վորոշ աշխուժացում՝ սոցիալիզմի ըստ ամենայնի դարգացման հետ միասին, յերբ Խորհրդային իշխանութիւնը նկատի ուներ տնտեսութեան յերկու սխտեմների՝ կապիտալիստականի և սոցիալիստականի՝ մրցութեան ընթացքում կազմակերպել սոցիալիստական սխտեմի գերակշռութիւնը կապիտալիստականի հանդեպ: Խնդիրն այն էր, վոր այդ մրցութեան ընթացքում ամբացնելինք սոցիալիզմի ղիրքերը, հասնելինք կապիտալիստական տարրերի վերացմանը և ավարտելինք սոցիալիստական սխտեմի՝ վորպես ժողովրդական տնտեսութեան հիմնական սխտեմի՝ հաղթութիւնը:

Մեր արդյունաբերութիւնը, առանձնապես ծանր արդյունաբերութիւնը, այն ժամանակ աննախանձելի պատկեր էր ներկայացնում: Ճիշտ է, նա ղիչ առ ղիչ վերականգնվում էր, բայց ղեռ շատ հեռու յեր իր արտադրանքը նախապատերազմյան մակարդակին հասցնելուց: Նա հիմնվում էր հին, հետամնաց և վոր հարուստ տեխնիկայի վրա: Իհարկէ, նա ղարդանում էր ղեպի սոցիալիզմը: Մեր արդյունաբերութեան սոցիալիստական հատվածի տեսակարար կշիռն այն ժամանակ կազմում էր մոտավորապես

80 տոկոս: Բայց կապիտալիզմի հատվածն, այնուամենայնիվ, իբր կողմն ունենալ արդյունաբերութեան վրչ պակաս քան 20 տոկոսը:

Մեր գյուղատնտեսութեանն ե՛լ ավելի անհրապույր պատկեր եր ներկայացնում: Ճիշտ ե, կալվածատերերի դասակարգէն արդէն վերացված եր, բայց դրա փոխարեն գյուղատնտեսական կապիտալիստները դասակարգը, կուլակները դասակարգը, դեռուս բազմական նշանակալից ուժ եր ներկայացնում: Ամբողջութեամբ առած՝ գյուղատնտեսութեանն այն ժամանակ հիշեցնում եր անհատական գյուղացիական մանր տնտեսութեանները մի անծայրածիր ուղիւնոս՝ իրենց հետամնաց միջնադարյան տեխնիկայով: Այդ ուղիւնոսում իբրև առանձին կետեր ու փոքրիկ կղզիներ գոյութեան ունեյին կոլտնտեսութեաններ և խորհտնտեսութեաններ, վորոնք, իսկապես ասած, մեր ժողովրդական տնտեսութեան մեջ դեռուս փոքրիշատե լուրջ նշանակութեան չունեյին: Կոլտնտեսութեաններն ու խորհտնտեսութեանները թույլ եյին, իսկ կուլակը դեռուս պահպանում եր իր ուժը: Այն ժամանակ մենք խոսում եյինք վո՛չ թե կուլակութեան վերացման, այլ նրա սահմանափակման մասին:

Նույնը պետք ե ասել նաև սպրանքաշրջանառութեան մասին յերկրում: Ապրանքաշրջանառութեան մեջ սոցիալիստական հատվածը կազմում եր ինչ-վոր 50—60 տոկոս, —վրչ ավելի, իսկ ամբողջ մնացած ասպարեղը դրաւված եր վաճառականների, սպեկուլանտների և այլ մասնավորների կողմից:

Այս եր մեր եկոնոմիկայի պատկերը 1924 թվականին:

Ի՞նչ ունենք մենք այժմ, 1936 թվականին:

Յեթե այն ժամանակ մենք ունեյինք ՆեՊ—ի առաջին ժամանակաշրջանը, ՆեՊ—ի սկիզբը, կապիտալիզմի վորոչ աշխուժացման ժամանակաշրջանը, ապա այժմ մենք ունենք ՆեՊ—ի վերջին ժամանակաշրջանը, ՆեՊ—ի վախճանը, կապիտալիզմի լիակատար վերացման ժամանակաշրջանը՝ ժողովրդական տնտեսութեան բոլոր վորոտներում:

Սկսենք թեկուզ նրանից, վոր այդ ժամանակաշրջանում մեր արդյունաբերութեանն աճեց, դարձաւ մի վիթխարի ուժ: Այժմ արդէն չի կարելի այն թույլ և տեխնիկապես վատ զինված անվանել: Ընդհակառակը, այն հիմնված ե այժմ նոր, ժամանակալից հարուստ տեխնիկայի վրա՝ ուժեղ կերպով դարգացած ծանր ինդուստրիայով և ե՛լ ավելի դարգացած մեքենայինութեամբ: Իսկ ամենից գլխավորն այն ե, վոր կապիտալիզմն իսպառ վտարված ե մեր արդյունաբերութեան վորորտից, իսկ արտադրութեան սո-

ցիալիստական ձևն այժմ անբաժանելիորեն տիրապետող սիստեմ ե հանդիսանում մեր արդյունաբերութեան բնագավառում: Չի կարելի մանրուք համարել այն փաստը, վոր մեր այժմյան սոցիալիստական ինդուստրիան, արտադրանքի ծավալի տեսակետից, ավելի քան յոթն անգամ գերազանցում ե մինչպատերազմյան ժամանակի ինդուստրիայից:

Գյուղատնտեսութեան բնագավառում մանր անհատական գյուղացիական տնտեսութեանների ուղիւնոսի փոխարեն՝ նրանց թույլ տեխնիկայով և կուլակի գերուժութեամբ՝ այժմ մենք ունենք աշխարհին ամենախոշոր մեքենայացված, նոր տեխնիկայով զինված մի արտադրութեան՝ կոլտնտեսութեանների ու խորհտնտեսութեանների համայնապարփակ սիստեմի ձևով: Բոլորին հայտնի յե, վոր կուլակութեանը գյուղատնտեսութեան մեջ վեցացված ե, իսկ գյուղացիական մանր անհատական տնտեսութեանների հատվածը՝ նրա հետամնաց միջնադարյան տեխնիկայով՝ այժմ աննշան տեղ ե գրաւում, ընդվորում նրա տեսակարար զիւրը գյուղատնտեսութեան մեջ՝ ցանքի տարածութեան չափի իմաստով՝ 2—3 տոկոսից ավելի չի կազմում: Չի կարելի չնչել այն փաստը, վոր այժմ կոլտնտեսութեաններն իրենց արամադրութեան առակ ունեն 316 հազար տրակտոր՝ 5·700·000 ձիու ուժի կարողութեամբ, իսկ խորհտնտեսութեանների հետ միասին ունեն ավելի քան 460 հազար տրակտոր՝ 7·580·000 ձիու ուժի կարողութեամբ:

Ինչ վերաբերում ե սպրանքաշրջանառութեանը յերկրում, ապա վաճառականներն ու սպեկուլանտներն իսպառ վտարված են այդ բնագավառից: Այժմ ամբողջ սպրանքաշրջանառութեանը գտնվում ե պետութեան, կոոպերացիայի և կոլտնտեսութեանների ձեռքում: Ծնունդ առավ ու զարգացավ նոր, խորհրդային առևտուրը, առևտուր առանց սպեկուլանտների, առևտուր առանց կապիտալիստների:

Այսպիսով սոցիալիստական սիստեմի լիակատար հաղթութեանը ժողովրդական տնտեսութեան բոլոր վորոտներում այժմ փաստ ե:

Իսկ ի՞նչ ե նշանակում այս:

Այս նշանակում ե, վոր մարդու շահագործումը մարդու կողմից վոչնչացված ե, վերացված ե, իսկ արտադրութեան գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականութեանը հաստատված ե վորպես մեր խորհրդային հասարակութեան անսասան հիմքը: (Յերկարատե ծափահարութեաններ):

Վորպես արդյունք խՍՀՄ—ի ժողովրդական տնտեսութեան

բնագավառում տեղի ունեցած այդ բոլոր փոփոխութիւններին՝ այժմ մենք ունենք նոր, սոցիալիստական եկոնոմիկա, վորը չգիտես ճգնաժամեր ու դործազրկութիւն, չգիտես աղքատութիւն ու քայքայում և վորը տալիս է քաղաքացիներին բոլոր հնարավորութիւններն ունենոր ու կուլտուրական կյանքի համար:

Սրանք են հիմնականում այն փոփոխութիւնները, վորոնք տեղի ունեցան մեր եկոնոմիկայի բնագավառում 1924 թվից մինչև 1936 թիւն ընկած ժամանակամիջոցում:

ԽՍՀՄ-ի եկոնոմիկայի բնագավառում տեղի ունեցած այդ փոփոխութիւններին համապատասխան՝ փոխվեց նաև մեր հասարակութեան դասակարգային կառուցվածքը:

Կարլաժատերերի դասակարգը, ինչպես հայտնի յե, արդեն վերացված էր քաղաքացիական պատերազմի հաղթական ավարտման հետևանքով: Ինչ վերաբերում է մյուս շահագործող դասակարգերին, ապա նրանց էլ բաժին ընկավ կարլաժատերերի դասակարգի բախտը: Չկա այլևս կապիտալիստների դասակարգն արդյունաբերութեան բնագավառում: Չկա այլևս կուլակների դասակարգը գյուղատնտեսութեան բնագավառում: Չկան այլևս վաճառականներն ու սպեկուլանտներն ապրանքաշրջանառութեան բնագավառում: Այդպիսով բոլոր շահագործող դասակարգերը վերացվեցին:

Մնաց բանվոր դասակարգը:

Մնաց գյուղացիների դասակարգը:

Մնաց ինտելիգենցիան:

Բայց սխալ կլիներ կարծել, վոր այս սոցիալական խմբերն այդ ժամանակամիջոցում վոչ մի փոփոխութիւն չկրեցին, վոր նրանք մնացին այնպես, ինչպես էյին, ասենք, կապիտալիզմի ժամանակաշրջանում:

Վերցնենք, որինակ, ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը: Ըստ հին հիշողութեան՝ նրան հաճախ կոչում են պրոլետարիատ: Բայց ի՞նչ է պրոլետարիատը: Պրոլետարիատը մի դասակարգ է, վոր զբաղված է արտադրութեան գործիքներից ու միջոցներից, տնտեսութեան մի այնպիսի սխտեմի ժամանակ, յերբ արտադրութեան գործիքներն ու միջոցները պատկանում են կապիտալիստներին և յերբ կապիտալիստների դասակարգը շահագործում է պրոլետարիատին: Պրոլետարիատը—դա կապիտալիստների կողմից շահագործվող դասակարգն է: Բայց մեզ մոտ, ինչպես հայտնի յե, կապիտալիստների դասակարգն արդեն վերացված է, արտադրութեան գործիքներն ու միջոցները խլված են կապիտալիստների ձեռքից և

հանձնված պետութեանը, վորի ղեկավար ուժը հանդիսանում է բանվոր դասակարգը: Հետևաբար, չկա այլևս կապիտալիստների դասակարգը, վորը կարողանար շահագործել բանվոր դասակարգին: Հետևաբար, մեր բանվոր դասակարգը վո՛չ միայն զբաղված է արտադրութեան գործիքներից ու միջոցներից, այլ, ընդհակառակը, նա դրանց տերն է ամբողջ ժողովրդի հետ միասին: Իսկ քանի վոր նա դրանց տերն է, իսկ կապիտալիստների դասակարգը վերացված է,—բացառված է բանվոր դասակարգի շահագործման ամեն մի հնարավորութիւն: Կարելի՞ յե արդե՞ր դրանից հետո մեր բանվոր դասակարգը պրոլետարիատ անվանել: Պարզ է, վոր չի կարելի: Մարքսն ասում էր. վորպեսզի պրոլետարիատն ազատագրի իրեն, նա պետք է ջախջախի կապիտալիստների դասակարգը, իսկ կապիտալիստներից արտադրութեան գործիքներն ու միջոցները և վոչնչացնի արտադրութեան այն պայմանները, վորոնք պրոլետարիատ են ծնում: Արդե՞ր կարելի՞ յե ասել, վոր ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգն արդեն իրականացրել է իր ազատագրման այդ պայմանները: Անպայման կարելի յե և պետք է ասել: Իսկ այդ ի՞նչ է նշանակում: Այդ նշանակում է, վոր ԽՍՀՄ-ի պրոլետարիատը փոխարկվել է միանգամայն մի նոր դասակարգի, ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի, վորը վոչնչացրել է տնտեսութեան կապիտալիստական սխտեմը, հաստատել է արտադրութեան գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականութիւն և տանում է խորհրդային հասարակութիւնը կոմունիզմի ուղիով:

Ինչպես տեսնում էք, ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը—դա մի բոլորովին նոր, շահագործումից ազատագրված բանվոր դասակարգ է, վորի նմանը մարդկութեան պատմութիւնը դեռ չի իմացել:

Անցնենք գյուղացիութեան հարցին: Սովորաբար ընդունված է ասել, թե գյուղացիութիւնը—դա մանր արտադրողների մի այնպիսի դասակարգ է, վորի անդամներն ատմացված են, ցորուցան յեղած ամբողջ յերկրի յերեսին, անհատաբար փորփրում են հետամնաց տեխնիկա ունեցող իրենց մանր տնտեսութիւններում, մասնավոր սեփականութեան ստրուկներ են և անպատիժ կերպով շահագործվում են կարլաժատերերի, կուլակների վաճառականների, սպեկուլանտների, վաշխառուների կողմից և այլն: Յե՛կ իրօք, գյուղացիութիւնը կապիտալիստական յերկիրներում, յե՛թե նկատի ունենանք նրա հիմնական մասսան, հենց այդպիսի դասակարգ է հանդիսանում: Արդե՞ր կարելի՞ յե ասել,

Թե մեր արդի գյուղացիութիւնը, խորհրդային գյուղացիութիւնը՝ իր մասսայով առած՝ նման է այդպիսի գյուղացիութեան: Վո՛չ, այդ չի կարելի ասել: Այդպիսի գյուղացիութիւն մեզ մոտ արդէն չկա: Մեր խորհրդային գյուղացիութիւնը միանգամայն նոր գյուղացիութիւն է: Մենք այլևս չունենք կալվածատերեր ու կուլակներ, վաճառականներ ու վաշխառուներ, վորոնք կարողանային շահագործել գյուղացիներին: Հետևաբար, մեր գյուղացիութիւնը շահագործումից ազատազրկված գյուղացիութիւն է: Այնուհետև, մեր խորհրդային գյուղացիութիւնն իր ճնշող մեծամասնութեամբ կոտնտեսային գյուղացիութիւն է, այսինքն՝ նա իր աշխատանքը և իր ստացվածքը հիմնում է վո՛չ թե անհատական աշխատանքի ու հետամնաց տեխնիկայի վրա, այլ կոլեկտիվ աշխատանքի և արդի տեխնիկայի վրա: Վերջապես, մեր գյուղացիութեան տնտեսութեան հիմքում գտնվում է վո՛չ թե մասնավոր սեփականութիւնը, այլ կոլեկտիվ սեփականութիւնը, վորն անել է կոլեկտիվ աշխատանքի բաղայի վրա:

Ինչպես տեսնում եք, խորհրդային գյուղացիութիւնը—դա միանգամայն նոր գյուղացիութիւն է, վորի նմանը դեռ չի իմացել մարդկութեան պատմութիւնը:

Անցնենք, վերջապես, ինտելիգենցիայի հարցին, ինժեներ-տեխնիկական աշխատողների, կուլտուրական ճակատի աշխատողների, ընդհանրապես ծառայողների և այլոց հարցին: Ինտելիգենցիան նույնպես մեծ փոփոխութիւններ է կրել անցած ժամանակաշրջանում: Այդ արդէն այն հին, կոչտապատած ինտելիգենցիան չէ, վորը փորձում էր դասակարգերից վեր դասել իրեն, բայց իսկապես՝ իր մասսայով առած՝ ծառայում էր կալվածատերերին ու կապիտալիստներին: Մեր խորհրդային ինտելիգենցիան—դա միանգամայն նոր ինտելիգենցիա յե, վորը բոլոր արմատներով կապված է բանվոր դասակարգի ու գյուղացիութեան հետ: Փոխվել է, նախ, ինտելիգենցիայի կազմը: Ազնվականութիւնից և բուրժուազիայից յեւրածները կազմում են մեր խորհրդային ինտելիգենցիայի փոքր տոկոսը: Խորհրդային ինտելիգենցիայի 80—90 տոկոսը—դա բանվոր դասակարգից, գյուղացիութիւնից և աշխատավորութեան այլ շերտերից յեւրածներն են: Փոխվել է, վերջապես, ինտելիգենցիայի գործունեութեան նաև բուն իսկ բնույթը: Առաջ նա պետք է ծառայեր հարուստ դասակարգերին, վորովհետև նրա համար այլ յեւր չկար: Այժմ նա պետք է ծառայի ժողովրդին, վորովհետև շահագործող դասակարգերն այլևս չկան: Յե՛վ հենց այդ պատճառով այժմ նա իրա-

վահավասար անդամ է խորհրդային հասարակութեան, վորտեղ նա բանվորների ու գյուղացիների հետ մեկտեղ, նրանց հետ միասին լծված, կատարում է նոր անդասակարգ սոցիալիստական հասարակութեան կառուցումը:

Ինչպես տեսնում եք, դա բոլորովին նոր, աշխատավոր ինտելիգենցիա յե, վորի նմանը չէք գտնի յերկրադնդի վո՛չ մի յերկրում:

Մրանք են այն փոփոխութիւնները, վորոնք կատարվել են անցած ժամանակաշրջանում՝ խորհրդային հասարակութեան դասակարգային կառուցվածքի բնագավառում:

Ինչի՞ մասին են խոսում այդ փոփոխութիւնները:

Նախ՝ նրանք ասում են այն, վոր սահմանադժեբը բանվոր դասակարգի և գյուղացիութեան միջև, ինչպես և այդ դասակարգերի ու ինտելիգենցիայի միջև, ջնջվում են, իսկ դասակարգային հին բացառիկութիւնն անհետանում է: Այդ նշանակում է, վոր տարածութիւնն այդ յերկու սոցիալական խմբերի միջև ավելի ու ավելի կրճատվում է:

Յերկրորդ՝ նրանք ասում են այն, վոր անտեսական հակասութեաններն այդ սոցիալական խմբերի միջև՝ ընկնում են, ջնջվում են:

Վերջապես, նրանք ասում են այն, վոր ընկնում ու ջնջվում են նաև քաղաքական հակասութիւնները նրանց միջև:

Այսպես է բանը ԽՍՀՄ-ի դասակարգային կառուցվածքի բնագավառում տեղի ունեցած փոփոխութիւնների նկատմամբ:

ԽՍՀՄ-ի հասարակական կյանքում կատարված փոփոխութիւնների պատկերը լրիվ չէր լինի, յեթե մի քանի խոսք չասեյինք մի բնագավառում ևս կատարված փոփոխութիւնների մասին: Յես նկատի ունեմ ազգային փոխհարաբերութիւնների բնագավառը ԽՍՀՄ-ում: Ինչպես հայտնի յե, Խորհրդային Միութեան մեջ մտնում են մոտ վաթսուհ սող, ազգային խմբեր ու ժողովուրդներ: Խորհրդային պետութիւնը բազմազգ պետութիւն է: Հասկանալի յե, վոր ԽՍՀՄ-ի ժողովուրդների փոխհարաբերութիւնների հարցը չի կարող առաջնակարգ նշանակութիւն չունենալ մեզ համար:

Ինչպես հայտնի յե, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւնը կազմվել է 1922 թվականին՝ ԽՍՀՄ-ի Խորհուրդների Առաջին Համագումարում: Նա կազմվել է ԽՍՀՄ-ի ժողովուրդների հավասարութեան ու կամավորութեան սկզբունքներով: Այժմ գործող Սահմանադրութիւնը, վորն ըն-

դունվել էր 1924 թվականին, ԽՍՀ Միության առաջին Մասնա-
նաբերությունն է: Դա այն ժամանակաշրջանն էր, յերբ հարաբե-
րությունները ժողովուրդների միջև դեռ ինչպես հարկն է՝ չէին
կարգավորված, յերբ վելիոուսների հանդեպ ցուցաբերվող ան-
վստահության մնացուկները դեռ էին անհետացել, յերբ կենտ-
րոնախույս ուժերը դեռևս շարունակում էին դործել: Հարկա-
վոր էր այդ պայմաններում կարգավորել ժողովուրդների յեղ-
բայրական համագործակցությունը՝ տնտեսական, քաղաքական
ու ռազմական փոխադարձ ոգնություն հիման վրա, միացնելով
նրանց, վորպես միութենական բաղմաղդ պետություն: Խորհրդ-
դային իշխանությունը չէր կարող չտեսնել այդ դործի գծավարու-
թյունները: Նա ուներ իր առջև բաղմաղդ պետությունների ան-
հաջող փորձերը բուրժուական յերկիրն ու: Նա ուներ իր առջև
հին Ավստրո-Հունգարիայի տապալված փորձը: Յեվ, այնուամե-
նայնիվ, նա դիմեց բաղմաղդ պետություն ստեղծելու փորձին,
վորովհետև նա դիտե, վոր սոցիալիզմի հիմքի վրա առաջացած
բաղմաղդ պետությունը պետք է դիմանար բոլոր ու ամեն տե-
սակ փորձություններին:

Այդ ժամանակից անցել է 14 տարի: Մի ժամանակաշրջան,
վորը բավական է փորձն ստուգելու համար: Յեվ ի՞նչ: Անցած
ժամանակաշրջանն անտարակուսելիորեն ցույց տվեց, վոր սոցի-
ալիզմի հիմքի վրա ստեղծված բաղմաղդ պետություն կազմելու
փորձը լիովին հաջողվել է: Դա լենինյան ազգային քաղաքակա-
նություն անկասկածելի հաղթությունն է: (Յերկարաուև ծախա-
կարուքյուններ):

Ինչո՞վ բացատրել այս հաղթությունը:

Ազգամիջյան կռիվների հիմնական կազմակերպիչներ հան-
դիսացող շահագործող դասակարգերի բացակայությունը. փոխա-
դարձ անվստահություն մշակող և ազգայնական կրքեր բորբոքող
շահագործման բացակայությունը. բանվոր դասակարգի իշխանու-
թյան գլուխ լինելը, մի դասակարգ, վորը հանդիսանում է ամեն
տեսակ ստրկացման թշնամի և կնտերնացիոնալիզմի դադախար-
ների հավատարիմ կրող. ժողովուրդների փոխադարձ ոգնության
իրական կենսագործումը տնտեսական ու հասարակական կյանքի
բոլոր ասպարեղներում. վերջապես, ԽՍՀՄ-ի ժողովուրդների ազ-
գային կուլուրայի ծաղկումը՝ ազգային ըստ ձևի և սոցիալիս-
տական ըստ բովանդակության, — այս բոլորը և որանց նման
դործոնները հասցրին այն բանին, վոր արմատապես փոխվեց
ԽՍՀՄ-ի ժողովուրդների կերպարանքը, անհայտացավ նրանց մի-

ջից փոխադարձ անվստահության զգացմունքը, դարգացավ նրանց
մեջ փոխադարձ բարեկամության զգացմունքը և այդպիսով կար-
գավորվեց ժողովուրդների իսկական յեղբայրական համագործակ-
ցությունը միասնական միութենական պետության սխտեֆում:

Իբրև արդյունք մենք ունենք այժմ միանգամայն կաղմա-
վորված և բոլոր փորձություններին դիմացած բաղմաղդ սոցիա-
լիստական պետություն, վորի ամբությանը կարող էր նախան-
ծել ամեն մի ազգային պետություն աշխարհի ամեն մի մասում:
(Բուռն ծախահարուքյուններ):

Մյանք են այն փոփոխությունները, վորոնք տեղի յեն ու-
նեցել ԽՍՀՄ-ում անցած ժամանակաշրջանում, ազգային փոխ-
կարարուքյունների ասպարեղում:

Այս է 1924 թվից մինչև 1936 թիվն ընկած ժամանակաշր-
ջանում ԽՍՀՄ-ի տնտեսական ու հասարակական-քաղաքական
կյանքում տեղի ունեցած փոփոխությունների ընդհանուր հան-
քաղումարը:

2041
37



III

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի՞նչ արտացոլում են ստացել ԽՍՀՄ-ի կյանքում տեղի ունեցած այդ բոլոր փոփոխությունները նոր Սահմանադրության նախագծում:

Այլ կերպ ասած՝ վորո՞նք են այս Համագումարի քննությունը ներկայացված Սահմանադրության նախագծի հիմնական առանձնահատկությունները:

Սահմանադրական Հանձնաժողովին հանձնարարված էր փոփոխություններ մտցնել 1924 թվականի Սահմանադրության տեքստում: Վորպես Սահմանադրական Հանձնաժողովի աշխատանքի արդյունք ստացվեց Սահմանադրության նոր տեքստ, ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության նախագիծը: Սահմանադրական Հանձնաժողովը, նոր Սահմանադրության նախագիծը կազմելիս, յեղակետ է ունեցել այն, վոր սահմանադրությունը չպետք է շփոթել ծրագրի հետ: Այդ նշանակում է, վոր ծրագրի ու սահմանադրության միջև ելական տարբերություն կա: Մինչդեռ ծրագիրը խոսում է այն բանի մասին, վորը դեռ չկա և վորը դեռ պետք է ձեռք բերվի ու նվաճվի ապագայում, սահմանադրությունն, ընդհակառակը, պետք է խոսի այն բանի մասին, ինչ վոր արդեն կա, ինչ վոր արդեն ձեռք է բերված ու նվաճված է այժմ, ներկայումս: Ծրագիրը վերաբերում է գլխավորապես ապագային, սահմանադրությունը՝ ներկային:

Յերկու որինակ՝ լուսարանություն համար:

Մեր խորհրդային հասարակությունը հասավ այն բանին, վոր նա արդեն հիմնականում իրականացրեց սոցիալիզմը, ստեղծեց սոցիալիստական հասարակակարգ, այսինքն՝ իրականացրեց այն, ինչ վոր մարքսիստների մոտ այլ կերպ կոչվում է կոմունիզմի առաջին կամ ստորին փուլ: Նշանակում է՝ մեզ մոտ ար-

դեն հիմնականում իրականացված է կոմունիզմի առաջին փուլը՝ սոցիալիզմը: (Յերկարատև ծափահարություններ): Կոմունիզմի այդ փուլի հիմնական սկզբունքն է, ինչպես հայտնի յե, հետևյալ Ֆորմուլան. «յուրաքանչյուրից՝ ըստ նրա ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ նրա աշխատանքի»: Արդյոք մեր Սահմանադրությունը պե՞տք է արտացոլի այդ փաստը, սոցիալիզմի նվաճման փաստը: Նա պե՞տք է արդյոք հիմնվի այդ նվաճման վրա: Անպայման պետք է հիմնվի: Պետք է, վորովհետև սոցիալիզմը ԽՍՀՄ-ի համար այն է, ինչ վոր արդեն ձեռք է բերվել և նվաճվել:

Բայց խորհրդային հասարակությունը դեռ չի հասել կոմունիզմի բարձրագույն փուլի իրականացմանը, վորտեղ տիրապետող սկզբունքն է լինելու հետևյալ Ֆորմուլան. «յուրաքանչյուրից՝ ըստ նրա ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ նրա պահանջմունքների», թեպետև նա իր առջև նպատակ է դրել հասնել ապագայում կոմունիզմի բարձրագույն փուլի իրականացմանը: Կարո՞ղ է արդյոք մեր Սահմանադրությունը հիմնվել կոմունիզմի բարձրագույն փուլի վրա, վորը դեռ չկա և վորը դեռ պետք է նվաճվի: Վո՞չ, չի կարող, վորովհետև կոմունիզմի բարձրագույն փուլը ԽՍՀՄ-ի համար այն է, ինչ վոր դեռ չի իրականացված և ինչ վոր պետք է իրականացվի ապագայում: Չի կարող, յեթե նա չի ուզում ապագա նվաճումների ծրագրի կամ գեղարարացի վերածվել:

Մրանք են մեր Սահմանադրության շրջանակները սովյալ պատմական մոմենտում:

Այդպիսով, նոր Սահմանադրության նախագիծը ներկայացնում է անցած ուղու արդյունքը, արդեն ձեռք բերված նվաճումների արդյունքը: Հետևաբար, նա հանդիսանում է դրանցումն ու որենսդրական ամրապնդումն այն բանի, ինչ վոր արդեն ձեռք է բերված ու նվաճված իրականում: (Բուռն ծափահարություններ):

Այս է ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության նախագծի առաջին առանձնահատկությունը:

Այնուհետև: Բուրժուական յերկիրների սահմանադրությունները սովորաբար յեղնում են կապիտալիստական հասարակակարգի անսասան լինելու համոզմունքից: Այդ սահմանադրությունների գլխավոր հիմքն են կազմում կապիտալիզմի սկզբունքները, նրա գլխավոր հիմունքները—հողի, անտառի, Փաբրիկաների, գործարանների և արտադրության այլ գործիքների ու միջոցների

մասնավոր սեփականութիւնը. մարդու շահագործումը մարդու հոգմից և շահագործողների ու շահագործվողների առկայութիւնը. աշխատավոր մեծամասնութեան ապահովված չլինելը հասարակութեան մեկ բեռնում և չաշխատող, բայց ապահովված փոքրամասնութեան ճոխութիւնը մյուս բեռնում և այլն և այլն: Նրանք հենվում են կապիտալիզմի այս և սրանց նման հիմունքների վրա: Նրանք արտացոլում են այս ամենը, նրանք որենսդրական կարգով ամրապնդում են այս բոլորը:

Ի տարբերութիւնը դրանցից՝ ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրութեան նախագիծը յեղնում է կապիտալիստական կարգերի վերացման փաստից, ԽՍՀՄ-ում սոցիալիստական կարգերի հաղթութեան փաստից: ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրութեան նախագիծի զըլխավոր հիմքը կազմում են սոցիալիզմի սկզբունքները, սրա զըլխավոր հիմունքները, վորոնք արդեն նվաճված և իրականացված են—հողի, անտառի, Փարբիկաների, դործարանների և արտադրութեան այլ դործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականութիւնը. շահագործման ու շահագործող դասակարգերի վերացումը. մեծամասնութեան աղքատութեան և փոքրամասնութեան ճոխութեան վերացումը. դործադրկութեան վերացումը. աշխատանքը՝ վորպես յուրաքանչյուր աշխատունակ քաղաքացու պարտականութիւն և պատվի պարտք՝ «ով չի աշխատում, նա չի ուտում» Փորմուլայի համաձայն: Աշխատանքի իրավունքը, այսինքն՝ ապահովված աշխատանք ստանալու վերաբերյալ յուրաքանչյուր քաղաքացու իրավունքը, հանգստի իրավունքը, կրթութեան իրավունքը և այլն և այլն: Նոր Սահմանադրութեան նախագիծը հենվում է սոցիալիզմի այս և սրանց նման հիմունքների վրա: Նա արտացոլում է այդ հիմունքները, նա որենսդրական կարգով ամրապնդում է դրանք:

Այս է նոր Սահմանադրութեան նախագիծի յերկրորդ առանձնահատկութիւնը:

Այնուհետև: Բուրժուական սահմանադրութիւնները լուրջայն յեղնում են այն նախադրյալից, վոր հասարակութիւնը բաղկացած է հակամարտ դասակարգերից, հարստութեան տեր դասակարգերից և հարստութիւն չունեցող դասակարգերից, վոր ինչ կուսակցութիւն էլ իշխանութեան գլուխ անցնի, հասարակութեան պետական ղեկավարութիւնը (գիկտատուրան) պետք է պատկանի բուրժուազիային, վոր սահմանադրութիւնը հարկավոր է ունենոր դասակարգերին հաճելի ու ձեռնտու հասարակական կարգերն ամրապնդելու համար:

Ի տարբերութիւնը բուրժուական սահմանադրութիւններից՝ ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրութեան նախագիծը յեղնում է այն բանից, վոր հասարակութեան մեջ այլևս հակամարտ դասակարգեր չկան, վոր հասարակութիւնը բաղկացած է յերկու միմյանց բարեկամ դասակարգերից՝ բանվորներից ու գյուղացիներից, վոր իշխանութեան գլուխ են կանգնած հենց այդ աշխատավորական դասակարգերը, վոր հասարակութեան պետական ղեկավարութիւնը (գիկտատուրան) պատկանում է բանվոր դասակարգին՝ վորպես հասարակութեան առաջավոր դասակարգի, վոր սահմանադրութիւնը հարկավոր է նրա համար, վորպեսզի ամրապնդենք աշխատավորութեանը ցանկալի և ձեռնտու հասարակական կարգերը:

Այս է նոր Սահմանադրութեան նախագիծի յերրորդ առանձնահատկութիւնը:

Այնուհետև: Բուրժուական սահմանադրութիւնները լուրջայն յեղնում են այն նախադրյալից, վոր ազգերը և ռասաները չեն կարող իրավահավասար լինել, վոր կան լիիրավ ազգեր և վոչ-լիիրավ ազգեր, վոր, բացի դրանից, գոյութիւն ունի ազգերի կամ ռասաների նաև յերրորդ կատեգորիա, որինակ, գաղութներում, վորոնք ունեն էլ ավելի պակաս իրավունքներ, քան վոչ-լիիրավ ազգերը: Այս նշանակում է, վոր այդ բոլոր սահմանադրութիւններն իրենց հիմքում նացիոնալիստական են, այսինքն՝ տիրապետող ազգերի սահմանադրութիւններ են:

Ի տարբերութիւնը այդ սահմանադրութիւններից՝ ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրութեան նախագիծը, ընդհակառակը, խորապես ինտերնացիոնալ է: Նա յեղնում է այն բանից, վոր բոլոր ազգերն ու ռասաներն իրավահավասար են: Նա յեղնում է այն բանից, վոր տարբերութիւնը մորթի գույնի կամ լեզվի, կուլտուրական մակարդակի կամ պետական զարգացման մակարդակի միջև, ինչպէս նաև վորեւէ այլ տարբերութիւն ազգերի և ռասաների միջև—չի կարող հիմք ծառայել այն բանի համար, վորպեսզի արդարացի ազգային անիրավահավասարութիւնը: Նա յեղնում է այն բանից, վոր բոլոր ազգերն ու ռասաները, անկախ նրանց անցյալ և ներկա դրութիւնից, անկախ նրանց ուժից ու թուլութիւնից,—պետք է ոգտվեն միատեսակ իրավունքներով հասարակութեան տնտեսական, հասարակական, պետական ու կուլտուրական կյանքի բոլոր վորտներում:

Այս է նոր Սահմանադրութեան նախագիծի չորրորդ առանձնահատկութիւնը:

Նոր Սահմանադրութեան նախագծի հինգերորդ առանձնա-
հատկութիւնը նրա հետեւողական և մինչև վերջը պահպանված
դեմոկրատիզմն է: Դեմոկրատիզմի տեսակետից բուրժուական
սահմանադրութիւնները կարելի չէ յերկու խմբի բաժանել. սահ-
մանադրութիւնների մի խումբն ուղղակի ժխտում է կամ փաս-
տորեն վոչնչի չէ վերածում քաղաքացիների իրավունքների հա-
վասարութիւնը և դեմոկրատական ազատութիւնները: Սահմա-
նադրութիւնների մյուս խումբը սիրով ընդունում է և մինչև
անգամ ցուցադրում է դեմոկրատական սկզբունքները, բայց միա-
ժամանակ այնպիսի վերապահումներ ու սահմանափակումներ է
անում, վոր դեմոկրատական իրավունքներն ու ազատութիւն-
ները բոլորովին խեղաթուրված են դուրս գալիս: Նրանք խոսում
են հավասար ընտրական իրավունքների մասին բոլոր քաղա-
քացիների համար, բայց տեղնուտեղը սահմանափակում են դրանք
նստակեցութեամբ և կրթական ու նույնիսկ գույքային ցենզով:
Նրանք խոսում են քաղաքացիների հավասար իրավունքների
մասին, բայց տեղնուտեղը վերապահութիւն են անում, վոր այդ
չի վերաբերում կանանց կամ նրանց վերաբերում է մասամբ:
Յե՛վ այն և այն:

ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրութեան նախագծի առանձնահատ-
կութիւնն այն է, վոր նա ազատ է այդպիսի վերապահումներից
ու սահմանափակումներից: Նրա համար դոկտրինային չունեն ակ-
տիվ կամ պասիվ քաղաքացիներ, նրա համար բոլոր քաղաքա-
ցիներն ակտիվ են: Նա տարբերութիւն չի ընդունում տղամարդ-
կանց ու կանանց, «նստակցացիների» ու «վոչ-նստակցացիների», ու-
նեւորների ու չունեւորների, կրթվածների ու վոչ-կրթվածների իրա-
ւունքների միջև: Նրա համար բոլոր քաղաքացիներն իրենց իրա-
ւունքներով հավասար են: Վո՛չ թէ գույքային դրութիւնը, վո՛չ
թէ ազգային ծագումը, վո՛չ թէ սեռը, վո՛չ թէ պաշտոնեյակն
ազատութիւնը, այլ յուրաքանչյուր քաղաքացու անձնական ընդու-
նակութիւններն ու անձնական աշխատանքն են վորոշում նրա
ազատութիւնը հասարակութեան մեջ:

Վերջապես, նոր Սահմանադրութեան նախագծի մի առանձնա-
հատկութիւն ևս: Բուրժուական սահմանադրութիւնները սովոր-
աբար սահմանափակվում են քաղաքացիների ձևական իրավունք-
ների Ֆիքսացիայով, չհոգալով այդ իրավունքների կենսագործ-
ման պայմանների մասին, նրանց կենսագործման հնարավորու-
թեան մասին, նրանց կենսագործման միջոցների մասին: Խոսում
են քաղաքացիների հավասարութեան մասին, բայց մոռանում են,

վոր չի կարող իսկական հավասարութիւն լինել տիրոջ ու բան-
վորի միջև, կալվածատիրոջ ու դրուղացու միջև, յեթե առա-
ջիններն ունեն հարստութիւն և քաղաքական կշիռ հասարակու-
թեան մեջ, իսկ յերկրորդները զրկված են թե՛ մեկից և թե՛ մյու-
սից, յեթե առաջինները շահագործողներ են, իսկ յերկրորդները՝
շահագործվողներ: Կամ դարձյալ. խոսում են խոսքի, ժողովների
և մամուլի ազատութեան մասին, բայց մոռանում են, վոր այդ բո-
լոր ազատութիւնները կարող են բանվոր դասակարգի համար
դատարկ հնչյունի վերածվել, յեթե նա զրկված է իր տրամա-
դրութեան տակ ժողովների համար հարմար շենքեր, լավ տպա-
րաններ, սպառարկան թղթի բալախանաչափ քանակութիւն և
այլն ունենալու հնարավորութիւնից:

Նոր Սահմանադրութեան նախագծի առանձնահատկութիւնն
այն է, վոր նա չի սահմանափակում քաղաքացիների ձևական
իրավունքների Ֆիքսացիայով, այլ ծանրութեան կենտրոնը փո-
խադրում է այդ իրավունքներն ապահովելու հարցի վրա, այդ
իրավունքներն իրականացնելու միջոցների վրա: Նա վո՛չ թէ սոսկ
հոչակում է քաղաքացիների իրավունքների հավասարութիւնը,
այլև ապահովում է այն՝ որենսդրական կարգով հաստատելով
շահագործման ռեժիմի վերացման փաստը, քաղաքացիների ամեն
մի շահագործումից ազատազրկելու փաստը: Նա վո՛չ թէ սոսկ
հոչակում է աշխատանքի իրավունք, այլև ապահովում է այն՝
որենսդրական կարգով հաստատելով ձգնաժամերի բացակայու-
թեան փաստը խորհրդային հասարակութեան մեջ, դործազրկու-
թեան վոչնչացման փաստը: Նա վո՛չ թէ սոսկ հոչակում է դեմո-
կրատական ազատութիւններ, այլև դրանք որենսդրական կար-
գով ապահովում է նյութական վորոշ միջոցներով: Ուստի հաս-
կանալի չէ, վոր նոր Սահմանադրութեան նախագծի դեմոկրա-
տիզմը վո՛չ թէ «սովորական» և «հանրաձանաչ» դեմոկրատիզմ
է ընդհանրապես, այլ սոցիալիստական դեմոկրատիզմ:

Սրանք են ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրութեան նախագծի հիմ-
նական առանձնահատկութիւնները:

Այսպես են արտացոլված նոր Սահմանադրութեան նախա-
դրում ԽՍՀՄ-ի տնտեսական ու հասարակական-քաղաքական կյան-
քում տեղի ունեցած այն տեղաշարժերն ու փոփոխութիւնները,
վորոնք իրականացվեցին 1924 թվից մինչև 1936 թիվն ընկած ժա-
մանակաշրջանում:

IV

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Մի քանի խոսք Սահմանադրության նախագծի բուրժուական քննադատության մասին:

Այն հարցը, թե ի՞նչպես է վերաբերվում ոտարերկրյա բուրժուական մամուլը Սահմանադրության նախագծին, անվիճելիորեն վորոշ հետաքրքրություն է ներկայացնում: Քանի վոր ոտարերկրյա մամուլն արտացոլում է բուրժուական յերկիրների բնակչության դանազան խավերի հասարակական կարծիքը, մենք չենք կարող անցնել այն քննադատության կողքով, վոր ծավալեց այդ մամուլը Սահմանադրության նախագծի դեմ:

Սահմանադրության նախագծի նկատմամբ ոտարերկրյա մամուլի ցուլց տված վերաբերմունքի առաջին նշաններն արտահայտվեցին վորոշ տենդենցով—լուծության մատնել Սահմանադրության նախագիծը: Տվյալ դեպքում յես նկատի ունեմ ամենառեակցիոն, Փաշխտական մամուլը: Քննադատների այդ խումբըն ամենից լավ համարեց պարզապես լուծության մատնել Սահմանադրության նախագիծը, գործը պատկերացնել այնպես, թե կարծես նախագիծ չի յեղել և ընդհանրապես այն չկա բնության մեջ: Կարող են ասել, թե լուծյան մատնելը քննադատություն չէ: Բայց դա ճիշտ չէ: Լուծյան մատնելու մեթոդը, վորպես անտեսելու հատուկ յեղանակ, նույնպես քննադատության մի ձև է, ճիշտ է՝ հիմար ու ծիծաղելի, բայց և այնպես քննադատության ձև: (Ընդհանուր ծիծաղ, ծափահարություններ): Սակայն լուծյան մատնելու նրանց մեթոդից բան դուրս չեկավ: Վերջիվերջո նրանք հարկադրված յեղան բանալ փակիչը և աշխարհին հաղորդել, թե, վորքան էլ այդ ցավալի լինի, այնուամենայնիվ իՍՍՀՄ-ի Սահմանադրության նախագիծը գոյություն ունի, և

վոր՛չ միայն գոյություն ունի, այլև սկսում է վնասակար ազդեցություն գործել մտքերի վրա: Այլ կերպ չեր էլ կարող լինել, վորովհետև աշխարհիս յերեսին այնուամենայնիվ կա մի ինչ—վոր հասարակական կարծիք, ընթերցողներ, կենդանի մարդիկ, վորոնք ուզում են ճշմարտությունն իմանալ փաստերի մասին և վոր մի հնարավորություն չկա յերկար ժամանակ յարբեայության մամուլի տակ պահել նրանց: Սարբեայությամբ հեռու չես գնա...

Քննադատների յերկրորդ խումբն ընդունում է, վոր Սահմանադրության նախագիծն իրոք գոյություն ունի բնության մեջ, բայց նա դանում է, վոր նախագիծը մեծ հետաքրքրություն չի ներկայացնում, վորովհետև նա ըստ եյության վոր՛չ թե սահմանադրության նախագիծ է, այլ դատարկ թղթի կտոր, դատարկ խոստում, վորը նպատակ ունի վորոշ մանյովր անել և մարդկանց յարբել: Ըստվորում նրանք ավելացնում են, վոր իՍՍՀՄ-ն ավելի լավ նախագիծ չեր էլ կարող տալ, վորովհետև իՍՍՀՄ-ն ինքը վոր՛չ թե պետություն է, այլ ընդամենն աշխարհագրական հասկացողություն (ընդհանուր ծիծաղ), իսկ քանի վոր նա պետություն չի հանդիսանում, այսպ նրա սահմանադրությունն էլ չի կարող իսկական սահմանադրություն լինել: Քննադատների այս խմբի տիպիկ ներկայացուցիչ է հանդիսանում, վորքան էլ այդ տարրինակ լինի, գերմանական ռֆիցիոդ «Դոյչե Դիպլոմատիշ-Պոլիտիշե Կորրեսպոնդենցը»: Այդ ժուռնալն ուղղակի ասում է, թե իՍՍՀՄ-ի Սահմանադրության նախագիծը դատարկ խոստում է, յարբեյություն, «պտյոմկինյան գյուղ»: Նա ասանց տատանվելու հայտարարում է, վոր իՍՍՀՄ-ն պետություն չի հանդիսանում, վոր իՍՍՀՄ-ն «ներկայացնում է վոր այլ ինչ, բայց յեթե ճշգրիտ կերպով վորոշվող աշխարհագրական հասկացողություն» (ընդհանուր ծիծաղ), վոր իՍՍՀՄ-ի Սահմանադրությունը, այդ պատճառով, չի կարող իսկական սահմանադրություն ճանաչվել:

Ի՞նչ կարելի յե ասել այդպիսի, թող ներվի ասել, քննադատների մասին:

Իր հեքիսթ—պատմվածքներից մեկի մեջ ուսական մեծ գրող Շչեդրինը տալիս է շատ սահմանափակ ու բթամիտ, բայց շտիպաղանց ինքնավստահ և տաքարյուն բյուրոկրատ սամոդուր մարդու տիպը: Այն բանից հետո, յերբ այդ բյուրոկրատն իրեն «վստահացած» մարդում «կարգ ու անդորրություն» հաստատեց, քննադատն անելով հազարավոր բնակիչների և հրկիզելով տասնյակ

քաղաքներ, նա նայեց իր շուրջը և հորիզոնի վրա նկատեց Ամերիկան, մի յերկիր, վորն, իհարկե, քիչ է հայտնի, վորտեղ, բանից դուրս է գալիս, վոր կան ժողովրդին շփոթեցնող ինչ-վոր ազատություններ և վորտեղ պետությունն ուրիշ մեթոդներով են կառավարում: Բյուրոկրատը նկատեց Ամերիկան և վրդովվեց. այդ ի՞նչ յերկիր է, վորտեղից լույս ընկավ այն, այդ ի՞նչ հիման վրա յե, վոր գոյություն ունի այն: (Ընդհանուր ծիծաղ, ծափահարություններ): Իհարկե, այդ յերկիրը պատահաբար հայտնագործել էյին մի քանի դար առաջ, բայց մի՞թե չի կարելի այն նորից ծածկել, վորպեսզի նրա հոտն անգամ չմնա: (Ընդհանուր ծիծաղ): Յե՛վ այս ասելով՝ մակադրեց. «Նորից ծածկել Ամերիկան»: (Ընդհանուր ծիծաղ):

Ինձ թվում է, վոր «Դոյչե Դիպլոմատիշ-Պոլիտիշե Կորրեսպոնդենցի» պարոնները, ինչպես ջրի յերկու կաթիլ, նման են Շչեդրինի բյուրոկրատին: (Ընդհանուր ծիծաղ, հավանության ծափահարություններ): ԽՍՀՄ-ն վաղուց է այդ պարոնների աչքի փուշը դարձել: 19 տարի կանգնած է ԽՍՀՄ-ն իբրև մի փարոս, ազատագրության շնչով վարակելով ամբողջ աշխարհի բանվոր դասակարգին և կատարություն առաջացնելով բանվոր դասակարգի թշնամիների մեջ: Յե՛վ նա, այդ ԽՍՀՄ-ն, բանից դուրս է գալիս, վոր՛չ միայն պարզապես գոյություն ունի, այլ նույնիսկ աճում է, և վոր՛չ միայն աճում է, այլ նույնիսկ բարգավաճում է, և վոր՛չ միայն բարգավաճում է, այլ նույնիսկ հորինում է նոր Սահմանագրության նախագիծ, մի նախագիծ, վորը մտքեր է գրգռում, նոր հույսեր է ներշնչում ճնշված դասակարգերին: (Ծափահարություններ): Սրանից հետո ել ի՞նչպես չվրդովվեն դերմանական ոֆիցիոզի պարոնները: Այդ ի՞նչ յերկիր է, վայնասուն են բարձրացնում նրանք. այդ ի՞նչ հիման վրա յե, վոր գոյություն ունի այն (ընդհանուր ծիծաղ), և յեթե այն հայտնագործել են 1917 թվի հոկտեմբերին, ապա ինչո՞ւ չի կարելի այն նորից ծածկել, վորպեսզի նրա հոտն անգամ չմնա: Յե՛վ այս ասելով վորոշեցին—նորից ծածկել ԽՍՀՄ-ն, հայտարարել ի լուր ամենքի, վոր ԽՍՀՄ-ն, վորպես պետություն, գոյություն չունի, վոր ԽՍՀՄ-ն վոչ այլ ինչ է, յեթե վոչ հասարակ աշխարհագրական հասկացողություն: (Ընդհանուր ծիծաղ):

Մակադրություն անելով, վորպեսզի նորից ծածկվի Ամերիկան, շչեդրինյան բյուրոկրատը, չնայելով իր ամբողջ բթամտությանը, այնուամենայնիվ գտավ իր մեջ իրականություն

ըմբռնելու տարրեր, տեղնուտեղն ասելով ինքն իրեն. «Բայց, կարծես թե, սույն այս բանն ինձնից չի կախված»: (Ուրախ ծիծաղի պոռկում և բուռն ծափահարություններ): Յես չգիտեմ, դերմանական ոֆիցիոզի պարոնների խելը կհասնի՞ արդե՞րդ զլխի ընկնելու, վոր թղթի վրա այս կամ այն պետությունը «ծածկել» նրանք, իհարկե, կարող են, բայց, յեթե լրջորեն խոսենք, ապա «սույն այս բանը նրանցից չի կախված»... (Ուրախ ծիծաղի պոռկում, բուռն ծափահարություններ):

Ինչ վերաբերում է այն բանին, վոր ԽՍՀՄ-ի Սահմանագրությունն իբր թե հանդիսանում է դատարկ խոստում, «սոցալիստիկական գյուղ» և այլն, ապա յես կուզեյի վկայակոչել մի շարք հաստատված փաստեր, վորոնք իրենք են խոսում իրենց մասին:

1917 թվին ԽՍՀՄ-ի ժողովուրդները տապալեցին բուրժուազիային և հաստատեցին պրոլետարիատի դիկտատուրա, հաստատեցին Խորհրդային իշխանություն: Սա փաստ է և վոչ թե խոստում:

Ապա, Խորհրդային իշխանությունը վերացրեց կալվածատերերի դասակարգը և նախկին կալվածատերական, պետական ու վանքապատկան ավելի քան 150 միլիոն հեկտար հող հանձնեց գյուղացիներին, և այս—բացի այն հողերից, վոր առաջներումն ել գյուղացիների ձեռքումն էյին գտնվում: Սա փաստ է և վոչ թե խոստում:

Ապա, Խորհրդային իշխանությունն եքսպրոպրիացիայի յենթարկեց կապիտալիստների դասակարգը, խլեց նրանցից բանկերը, գործարանները, յերկաթուղիները և արտադրության այլ գործիքներն ու միջոցները, դրանք սոցիալիստական սեփականություն հայտարարեց և այդ ձեռնարկությունների գլուխ կանգնեցրեց բանվոր դասակարգի լավագույն մարդկանց: Սա փաստ է և վոչ թե խոստում: (Յերկարատև ծափահարություններ):

Ապա, նոր սոցիալիստական հիմունքների վրա, նոր տեխնիկական բազայով կազմակերպելով արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը՝ Խորհրդային իշխանությունը հասավ այն բանին, վոր ներկայումս ԽՍՀՄ-ի հողագործությունը մեկ և կես անդամ ավելի արտադրանք է տալիս, քան նախապատերազմյան ժամանակ, ինդուստրիան տալիս է յոթն անգամ ավելի արտադրանք, քան նախապատերազմյան ժամանակ, իսկ ժողովրդական յեկամուտն աճել է չորս անգամ՝ համեմատած նախապատերազ-

Մյան ժամանակի հետ: Այս բոլորը փաստեր են և վոչ թե խոստումներ: (Յերկարատև ծափահարություններ):

Ապա, Պորհրդային իշխանությունը վոչնչացրեց դործազրուկությունը, կիրառեց կյանքում աշխատանքի իրավունքը, հանգրստի իրավունքը, կրթության իրավունքը, բանվորների, դուրդացիների և ինտելիգենցիայի համար ապահովեց լավագույն նյութական և կուլտուրական պայմաններ, ապահովեց ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի կենսադործումը՝ քաղաքացիներին դադարնի քվեարկության պայմաններում: Այս բոլորը փաստեր են և վոչ թե խոստումներ: (Յերկարատև ծափահարություններ):

Վերջապես, ԽՍՀՄ-ն սովեց նոր Սահմանադրության նախագիծ, վորը, վոչ թե խոստում է, այլ այդ հանրաժանութ փաստերի գրանցում և որենսդրական ամրապնդում, գրանցումն ու որենսդրական ամրապնդումն այն բանի, ինչ վոր արդեն ձեռք է բերված ու նվաճված:

Հարց է ծագում. այս բոլորից հետո ինչի յե հանդում գերմանական ոֆիցիոզի պարոնների շաղակրատությունը «պոտյոմկինյան դուրդերի» մասին, յեթե վոչ այն բանին, վոր նրանք նպատակ են դրել թագցնելու ժողովրդից ճշմարտությունը ԽՍՀ Միության մասին, մոլորեցնելու ժողովրդին, խաբելու նրան:

Սրանք են փաստերը: Իսկ փաստերը, ինչպես ասում են, համառ բան են: Գերմանական ոֆիցիոզի պարոնները կարող են ասել՝ ավելի՛ վատ փաստերի համար: (Ընդհանուր ծիծաղ): Բայց այն ժամանակ նրանց կարելի յե պատասխանել ուստական հայտնի ասացվածքի այս խոսքերով՝ «հիմարների համար որենք չկա»: (Ուրախ ծիծաղ, յերկարատև ծափահարություններ):

Քննադատների յերրորդ խումբը հակառակ չե ընդունելու Սահմանադրության նախագծի վորոչ արժանիքները, նա գրական յերևույթ է համարում այդ նախագիծը, բայց այդ խումբը՝ արի ու տես, վոր շատ է կասկածում, թե կարելի կլինի՞ արդյոք այդ Սահմանադրության մի շարք գրույթները կենսադործել, վորովհետև նա համոզված է, վոր այդ գրույթներն ընդհանրապես անիրագործելի յեն և պետք է մնան թղթի վրա: Սրանք, մեղմ ասած, սկեպտիկներ են: Դրանք, այդ սկեպտիկները, գոյություն ունեն բոլոր յերկերներում:

Պետք է ասել, վոր մենք գրանց առաջին անգամը չե, վոր հանդիպում ենք: Յերբ բուլլեիկները 1917 թ. վերցնում էին իր-

խանությունը, սկեպտիկներն ասում էին. բուլլեիկները, թերևս, վատ մարդիկ չեն, բայց իշխանության գործը նրանց մոտ առաջ չի դնա, նրանք կտապալվեն: Սակայն իրականում դուրս յեկավ, վոր տապալվեցին վոչ թե բուլլեիկները, այլ սկեպտիկները:

Քաղաքացիական պատերազմի և ոտարերկրյա ինտերվենցիայի ժամանակ սկեպտիկների այդ խումբն ասում էր. Պորհրդային իշխանությունն, իհարկե, վատ բան չե, բայց Դենիկինը կուլչակի հետ մեկտեղ, պլյուս ոտարերկրացիները, թերևս կհաղթահարեն նրան: Սակայն, իրականում դուրս յեկավ, վոր սկեպտիկներն այստեղ ել սխալվեցին իրենց հաշիվներում:

Յերբ Պորհրդային իշխանությունը հրապարակեց առաջին հնգամյա պլանը, սկեպտիկները նորից ասպարեղ յեկան, ասելով. հնգամյակը, իհարկե, լավ բան է, բայց նա հաղիվ թե իրագործելի լինի. պետք է յենթադրել, վոր բուլլեիկների մոտ հնգամյակի գործը գլուխ չի գա: Սակայն, փաստերը ցույց տվին, վոր սկեպտիկների բախտը նորից չբանեց—հնգամյա պլանն իրագործվեց չորս տարում:

Նույն բանը պետք է ասել նոր Սահմանադրության նախագծի և սկեպտիկների կողմից այդ Սահմանադրության քննադատության մասին: Բավական էր հրապարակել նախագիծը, վորպեսզի քննադատների այդ խումբը նորից բեմ դուրս գար իր առողտակալի սկեպտիսով, Սահմանադրության մի քանի գրույթների իրագործելիության վերաբերյալ իր կասկածներով: Վոչ մի հիմք չկա կասկածելու այն մասին, վոր սկեպտիկները կտապալվեն նաև սովյալ դեպքում, կտապալվեն այժմ նույնպես, ինչպես քանիցս տապալվել են անցյալում:

Քննադատների չորրորդ խումբը, գրոհելով նոր Սահմանադրության նախագծի վրա, բնութագրում է այն վորպես «տեղաշարժ դեպի աջ», վորպես «հրաժարումն պրոլետարիատի դիկտատուրայից», վորպես «բուլլեիկյան ռեժիմի վերացում»: «Բուլլեիկիկները դեպի աջ ճոճվեցին, այդ փաստ է»—ասում են նրանք դանազան ձայներով: Այդ տեսակետից առանձնապես ջանք են պործ դնում մի քանի լեհական և մասամբ ամերիկյան թերթեր:

Ինչ կարելի յե ասել այդ, թող ներվի ասել, քննադատների մասին:

Յեթե բանվոր դասակարգի դիկտատուրայի բազայի ընդարձակումը և դիկտատուրայի վերածումը հասարակության պետական ղեկավարման ավելի ձկուն, հետևաբար՝ ավելի հզոր սիս-

տեմի՝ մեկնաբանվում է նրանց կողմից վոչ վորպես բանվոր դասակարգի ղեկավարության ուժեղացում, այլ վորպես նրա լեռնա-ցում կամ նույնիսկ վորպես հրաժարումն դրանից, ապա թույլատրելի յե հարցնել. իսկ ընդհանրապես դիտե՞ն արդյոք այդ պարոնները, թե ինչ բան է բանվոր դասակարգի ղեկավարության:

Յեթե սոցիալիզմի հաղթության որենսդրական ամրապնդումը, ինդուստրացման, կոլեկտիվացման ու դեմոկրատացման հաջողությունների որենսդրական ամրապնդումը նրանց մոտ կոչվում է «տեղաշարժ դեպի աջ», ապա թույլատրելի յե հարցնել. իսկ ընդհանրապես դիտե՞ն արդյոք այդ պարոնները, թե ինչով է տարբերվում ձախն աջից: (Ընդհանուր ծիծաղ, ծափահարություններ):

Տարակույս չի կարող լինել, վոր այդ պարոնները վերջնականապես խճճվել են Սահմանադրության նախագծի իրենց քննադատության մեջ և խճճվելով՝ չփոթել են աջը ձախի հետ:

Այդ առթիվ չի կարելի չհիշել ճորտ տնային «աղջիկ» Պելազեյային—Գոգոլի «Մեռյալ հոգիներից»: Նա, ինչպես պատմում է Գոգոլը, հանձն առավ մի անդամ ճանապարհ ցույց տալ Ձիչիկովի կառապան Սելիֆանին, բայց չկարողանալով տարբերել ճանապարհի աջ կողմը նրա ձախ կողմից, չփոթվեց և անհարմար դրություն մեջ ընկավ: Պետք է ընդունել, վոր մեր քննադատները լեհական թերթերից, չնայած նրանց ամբողջ ամբիցիային, այնուամենայնիվ հեռու չեն դնացել «Մեռյալ հոգիների» ճորտ տնային «աղջիկ» Պելազեյայի, հասկացողության մակարդակից: (Ծափահարություններ): Յեթե կհիշեք, կառապան Սելիֆանը հարկավոր համարեց չչարել Պելազեյային՝ աջը ձախի հետ չփոթելու համար, ասելով նրան. «Եյ, դու, սևատոտիկ... չգիտես, թե վորտեղ է աջը, վորտեղ՝ ձախը»: Յես կարծում եմ, վոր հարկավոր եր հենց այդպես էլ չչարել մեր ձախողակ քննադատներին, ասելով նրանց. Եյ, դուք, վա՛յ-քննադատներ... չգիտեք, թե վորտեղ է աջը, վորտեղ՝ ձախը: (Յերկարատև ծափահարություններ):

Վերջապես, քննադատների մի խումբ ևս: Յեթե նախորդ խումբը Սահմանադրության նախագիծը մեղադրում է բանվոր դասակարգի ղեկավարության հրաժարվելու համար, ապա այս խումբը մեղադրում է նրան, ընդհակառակը, այն բանի համար, վոր նա վոչինչ չի փոխում ՌՍՀՄ-ում գոյություն ունեցող դրություն մեջ, վոր նա ձեռք չի տալիս բանվոր դասակարգի ղեկավար-

տուրային, թույլ չի տալիս քաղաքական կուսակցությունների ազատություն և ուժի մեջ է պահում կոմունիստների կուսակցության ներկա ղեկավար դերը ՌՍՀՄ-ում: Ընդամին քննադատների այդ խումբը դատում է, վոր ՌՍՀՄ-ում կուսակցությունների ազատության բացակայությունը դեմոկրատիզմի հիմքերի խախտման նշան է:

Յես պետք է խոստովանեմ, վոր նոր Սահմանադրության նախագիծն իրոք ուժի մեջ է պահում բանվոր դասակարգի ղեկավարության ուժի մեջ, ինչպես նաև անփոփոխ է թողնում Կոմունիստական կուսակցության ներկա ղեկավար դերը ՌՍՀՄ-ում: (Բուռն ծափահարություններ): Յեթե հարգելի քննադատները դա Սահմանադրության նախագծի թերությունն են համարում, ապա կարելի յե միայն ամոստալ այդ մասին: Իսկ մենք, բուլլետիներս, դա համարում ենք Սահմանադրության նախագծի արժանիքը: (Բուռն ծափահարություններ):

Ինչ վերաբերում է տարբեր քաղաքական կուսակցությունների ազատությանը, ապա այստեղ մենք մի քիչ այլ հայացքներ ենք սրաչապանում: Կուսակցությունը դասակարգի մի մասն է, նրա առաջավոր մասը: Մի քանի կուսակցություններ, նշանակում է՝ նաև կուսակցությունների ազատություն, կարող են գոյություն ունենալ միմիայն այնպիսի հասարակության մեջ, վորտեղ կան հակամարտ դասակարգեր, վորոնց շահերը թշնամական են ու անհաշտ, վորտեղ կան, ասենք, կապիտալիստներ ու բանվորներ, կալվածատերեր ու գյուղացիներ, կուլակներ ու չքավորություն և այլն: Բայց ՌՍՀՄ-ում չկան այլևս այնպիսի դասակարգեր, ինչպիսիք են կապիտալիստները, կալվածատերերը, կուլակները և այլն: ՌՍՀՄ-ում կա միայն յերկու դասակարգ՝ բանվորներն ու գյուղացիները, վորոնց շահերը վո՛չ միայն թրջնամական չեն, այլ ընդհակառակը—բարեկամական են: Հետևաբար, ՌՍՀՄ-ում հող չկա մի քանի կուսակցությունների գոյության համար, ուրեմն նշանակում է՝ նաև այդ կուսակցությունների ազատության համար: ՌՍՀՄ-ում հող կա միայն մի կուսակցության՝ Կոմունիստական կուսակցության համար: ՌՍՀ Միությունում կարող է գոյություն ունենալ միայն մի կուսակցություն—կոմունիստների կուսակցությունը, վորը խիզախորեն և մինչև վերջը պաշտպանում է բանվորների ու գյուղացիների շահերը: Իսկ վոր նա վատ չի պաշտպանում այդ դասակարգերի

չահերը, սրանում հազիվ թե վորևէ տարակույս լինի: (Բուռն
ծափահարություններ):

Ոոսում են դեմոկրատիայի մասին: Բայց ի՞նչ բան է դեմո-
կրատիան: Դեմոկրատիան կապիտալիստական յերկիրներում,
վորտեղ կան հակամարտ դասակարգեր, վերջին հաշվով դեմո-
կրատիա յե ուժեղների համար, դեմոկրատիա յե ունևոր վոքրա-
մասնության համար: Դեմոկրատիան իՍՂՄ-ում, ընդհակառակը,
դեմոկրատիա յե աշխատավորների համար, այսինքն՝ դեմոկրա-
տիա յե բոլորի համար: Բայց դրանից հետևում է, վոր դեմո-
կրատիզմի հիմքերը խախտվում են վո՛չ թե իՍՂՄ-ի նոր Սահմա-
նադրության նախագծի, այլ բուրժուական սահմանադրություն-
ների կողմից: Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր իՍՂՄ-ի
Սահմանադրությունը միակ մինչև վերջը դեմոկրատական սահ-
մանադրությունն է աշխարհում:

Այսպես է բանը իՍՂՄ-ի նոր Սահմանադրության նախագծի
բուրժուական քննադատության վերաբերմամբ:

V

ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ՅԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՍԱՀՄԱ- ՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անցնենք Սահմանադրության նախագծի շուրջը յեղած ուղղում-
ների և լրացումների հարցին, վորոնք մտցված են քաղաքացիների
կողմից նախագծի համաժողովրդական քննարկման ժամանակ:

Սահմանադրության նախագծի համաժողովրդական քննար-
կումը, ինչպես հայտնի յե, բավական նշանակալից քննակու-
թյամբ ուղղումներ և լրացումներ տվեց: Դրանք բոլորը հրապո-
րակված են խորհրդային մամուլում: Նկատի ունենալով ուղղում-
ների մեծ բազմազանությունը և նրանց վոչ-միատեսակ արժեքը,
հարկ կլինեն, իմ կարծիքով, բաժանել դրանք յերեք կատեգո-
րիայի:

Առաջին կատեգորիայի ուղղումների տարբերիչ դիժն այն է,
վոր դրանք խոսում են վո՛չ թե Սահմանադրության հարցերի
մասին, այլ ապագա որենսդրական մարմինների ընթացիկ որենս-
դրական աշխատանքի հարցերի մասին: Ապահովադրման առան-
ձին հարցեր, կոլտնտեսային շինարարության մի քանի հարցեր,
արդյունաբերական շինարարության մի քանի հարցեր, Ֆինանս-
սական գործի հարցեր, — սրանք են այդ ուղղումների թեմաները:
Ինչպես յերևում է, այս ուղղումների հեղինակները չեն պար-
զել իրենց համար սահմանադրական հարցերի և ընթացիկ որենս-
դրության հարցերի միջև յեղած տարբերությունը: Հենց այդ
պատճառով էլ նրանք ջանք են գործ դնում Սահմանադրության
մեջ խցկել, վորքան կարելի յե, շատ որենքներ, գործը տանելով
այն ուղղությամբ, վորպեսզի Սահմանադրությունը վերածվի
որենքների հավաքածուի նման մի բանի: Բայց Սահմանադրու-
թյունն որենքների հավաքածու չէ: Սահմանադրությունը հիմնա-
կան որենք է, և միմիայն հիմնական որենք: Սահմանադրությու-
նը չի բացառում, այլ յենթադրում է ապագա որենսդրական մար-

միններէ ընթացիկ որենսդրական աշխատանքը: Սահմանադրութիւնն իրաւաբանական հիմք է տալիս այդպիսի մարմիններէ ապագա որենսդրական գործունեութեան համար: Այս պատճառով այդ տեսակի ուղղումներն ու լրացումները, վորպէս Սահմանադրութեան հետ ուղղակի առնչութիւն չունեցող, իմ կարծիքով, պետք է ուղղվեն յերկրի ապագա որենսդրական մարմիններին:

Յերկրորդ կատեգորիային պետք է վերադրել այնպիսի ուղղումներն ու լրացումները, վորոնք փորձում են Սահմանադրութեան մեջ պատմական տեղեկանքների տարբեր մտցնել կամ դեկլարացիայի տարբեր այն մասին, ինչի վոր դեռ չի հասել խորհրդային իշխանութիւնը և ինչի վոր նա պետք է հասնի ապագայում: Նշել Սահմանադրութեան մեջ, թե ինչպիսի դժվարութիւններ են հաղթահարել յերկարատե տարիներէ ընթացքում կուսակցութիւնը, բանվոր դասակարգն ու բոլոր աշխատավորները սոցիալիզմի հաղթութեան համար մղվող կռիւմ, մատնանշել Սահմանադրութեան մեջ խորհրդային շարժման վերջնական նպատակը, այն է՝ լիակատար կոմունիստական հասարակութեան կառուցումը, — սրանք են այդ ուղղումների թեմաները, վորոնք կրկնվում են զանազան վարիացիաներով: Յես կարծում եմ, վոր Սահմանադրութեան հետ ուղղակի առնչութիւն չունեցող այդպիսի ուղղումներն ու լրացումները նույնպէս պետք է մի կողմ դրվեն: Սահմանադրութիւնը գրանցումն և որենսդրական ամրապնդումն է այն նախնականների, վորոնք արդեն ձեռք են բերված և ապահովված են: Յեթե մենք չենք ուղում աղավաղել Սահմանադրութեան այս հիմնական բնույթը, մենք չպետք է այն լցնենք պատմական տեղեկանքներով անցյալի մասին կամ դեկլարացիաներով ԽՍՀՄ-ի աշխատավորների ապագա նախնականների մասին: Այդ գործի համար մենք ուրիշ ուղիներ և ուրիշ փաստաթղթեր ունենք:

Վերջապէս, յերրորդ կատեգորիային պետք է վերադրել այնպիսի ուղղումներն ու լրացումները, վորոնք ուղղակի առնչութիւն ունեն Սահմանադրութեան նախագծի հետ:

Այս կատեգորիայի ուղղումների նշանակալից մասը խմբագրական բնույթ ունի: Այս պատճառով դրանք կարելի չէր հանձնել ներկա Համագումարի Խմբագրական հանձնաժողովին, վորը, յես կարծում եմ, կստեղծի Համագումարը, հանձնարարելով նրան նոր Սահմանադրութեան տեքստի վերջնական խմբագրութիւնը սահմանելը:

Ինչ վերաբերում է յերրորդ կատեգորիայի մնացած ուղղումներին, ապա դրանք այլևի եյական նշանակութիւն ունեն և նրանց մասին, ըստիս, հարկ կլինի մի քանի խոսք ասել այստեղ:

1) Ամենից առաջ Սահմանադրութեան նախագծի առաջին հոդվածի վերաբերյալ ուղղումների մասին: Կա չորս ուղղում: Վոմանք առաջարկում են «բանվորների և գյուղացիների պետութիւն» բառերի տեղ ասել՝ «աշխատավորների պետութիւն»: Ուրիշներն առաջարկում են՝ «բանվորների և գյուղացիների պետութիւն» բառերին աւելացնել՝ «և աշխատավոր ինտելիգենցիայի»: Յերրորդներն առաջարկում են «բանվորների և գյուղացիների պետութիւն» բառերի փոխարեն ասել՝ «ԽՍՀՄ-ի տերիտորիայում բնակվող բոլոր դասաների և ազգութիւնների պետութիւն»: Չորրորդներն առաջարկում են «գյուղացիների» բառը փոխարենել՝ «կուտնտեսականների» բառով կամ՝ «սոցիալիստական հոգադործութեան աշխատավորների» բառերով:

Հարկ կա՞րդ ընդունել այս ուղղումները: Յես կարծում եմ, վոր հարկ չկա:

Ինչի՞ մասին է խոսում Սահմանադրութեան նախագծի առաջին հոդվածը: Նա խոսում է խորհրդային հասարակութեան դասակարգային կազմի մասին: Կարո՞ղ ենք արդոք մենք, մարքսիստներս, զանց առնել Սահմանադրութեան մեջ մեր հասարակութեան դասակարգային կազմի հարցը: Վո՞չ, չենք կարող: Խորհրդային հասարակութիւնը բաղկացած է, ինչպէս հայտնի յես, յերկու դասակարգերից, բանվորներից ու գյուղացիներից: Սահմանադրութեան նախագծի առաջին հոդվածը հենց սրա մասին էլ խոսում է: Հետևաբար, Սահմանադրութեան նախագծի առաջին հոդվածը ճիշտ է արտացոլում մեր հասարակութեան դասակարգային կազմը: Կարող են հարցնել՝ իսկ աշխատավոր ինտելիգենցիան՞: Ինտելիգենցիան յերբեք դասակարգ չի յեղել և չի կարող լինել, — նա յեղել է և մնում է միջնախավ, վոր իր անդամներին հավաքարկում է հասարակութեան բոլոր դասակարգերից: Հինժամանակ ինտելիգենցիան իր անդամներին հավաքարկում եր ազնվականներից, բուրժուազիայից, մասամբ գյուղացիներից և միայն ամենամանջան չափով բանվորներից: Մեր խորհրդային ժամանակում ինտելիգենցիան իր անդամներին հավաքարկում է գլխավորապէս բանվորներից ու գյուղացիներից: Բայց ինչպէս էլ վոր նա հավաքարկվի և ինչ բնույթ էլ վոր կրի, ինտելիգենցիան այնուամենայնիւ միջնախավ է և վոչ թե դասակարգ:

Չի՞ դիպչում արդյոք այս հանդամանքն աշխատավոր ինտե-
լիգենցիայի իրավունքներին: Ամենևին: Սահմանադրութեան նախա-
դիմումի առաջին հոդվածը խոսում է վո՛չ թե խորհրդային հասարակ-
ութեան տարբեր շերտերի իրավունքների մասին, այլ այդ հասարակու-
թեան դասակարգային կազմի մասին: Խորհրդային հասարակութեան տարբեր
շերտերի իրավունքների մասին, այդ թվում՝ աշխատավոր ինտելիգենցիայի
իրավունքների մասին, խոսվում է զլխավորապես Սահմանադրութեան նախադիմումի տասն-
երորդ և տասնմեկերորդ գլուխներում: Այդ գլուխներից պարզ յե-
րևում է, վոր բանվորները, գյուղացիները և աշխատավոր ինտե-
լիգենցիան միանդամայն իրավահավասար են յերկրի տնտեսա-
կան, քաղաքական, հասարակական և կուլտուրական կյանքի բո-
լոր վոլորտներում: Հետևաբար, աշխատավոր ինտելիգենցիայի
իրավունքներին դիպչելու մասին խոսք անգամ չի կարող լինել:

Նույն բանը պետք է ասել ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնող ազ-
գերի և ռուսների մասին: Սահմանադրութեան նախադիմումի յերկ-
րորդ գլխում արդեն ասված է, վոր ԽՍՀՄ-ն իրավահավասար
ազգերի ազատ միութիւնն է: Արժե՞ արդյոք կրկնել այդ Ֆորմու-
լան Սահմանադրութեան նախադիմումի առաջին հոդվածում, վորը
խոսում է վո՛չ թե խորհրդային հասարակութեան ազգային կազ-
մի, այլ նրա դասակարգային կազմի մասին: Պարզ է, վոր չարժե:
Ինչ վերաբերում է ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնող ազգերի և ռու-
սաների իրավունքներին, ապա դրանց մասին խոսվում է Սահ-
մանադրութեան նախադիմումի յերկրորդ, տասերորդ և տասնմեկե-
րորդ գլուխներում: Այդ գլուխներից պարզ յերևում է, վոր
ԽՍՀՄ-ի ազգերն ու ռուսները միատեսակ իրավունքներ են վա-
յելում յերկրի տնտեսական, քաղաքական, հասարակական ու
կուլտուրական կյանքի բոլոր վոլորտներում: Հետևաբար, խոսք
անգամ չի կարող լինել ազգային իրավունքներին դիպչելու մա-
սին:

Նմանապես սխալ կլինեն «գյուղացի» բառը փոխարինել
«կոլտնտեսական» բառով, կամ «սոցիալիստական հողագործու-
թեան աշխատավոր» բառերով: Նախ՝ գյուղացիների մեջ, բացի
կոլտնտեսականներից, կան դեռևս մի միլիոնից ավելի վոչ-կոլ-
տնտեսականների տնտեսութիւններ: Ի՞նչպես վարվել նրանց հետ:
Արդյոք այդ ուղղման հեղինակները չե՞ն մտածում հաշվից դուրս
դրել նրանց: Այդ խեղացի չեր լինի: Յերկրորդ՝ յեթե գյուղացի-
ների մեծամասնութիւնն սկսել է կոլխոզային տնտեսութիւն
վարել, ապա այդ դեռ չի նշանակում, վոր նա դադարել է գյու-

ղացիութիւն լինելուց, վոր նա չունի այլևս իր անձնական տըն-
տեսութիւնը, սեփական բակը և այլն: Յերրորդ՝ այն ժամանակ
կարիք կլինեն «բանվոր» բառը նույնպես փոխարինել «սոցիա-
լիստական արդուներութեան աշխատավոր» բառերով, վորը,
սակայն, ուղղման հեղինակները, չզիտես ինչ պատճառով, չեն
առաջարկում: Վերջապես, մի՞թե մեզ մոտ արդեն անհետացել են
բանվորների դասակարգը և գյուղացիների դասակարգը: Իսկ յե-
թե նրանք չեն անհետացել, ապա արժե՞, արդյոք, ջնջել բառա-
բանից նրանց համար սահմանված անունները: Ուղղման հեղի-
նակներն, ըստ յերևութին, աչքի առաջ ունեն վո՛չ թե ներկա,
այլ ապագա հասարակութիւնը, յերբ այլևս դասակարգեր չեն
լինի և յերբ բանվորներն ու գյուղացիները կլինեն միաս-
նական կոմունիստական հասարակութեան աշխատավորներ: Հե-
տևաբար, նրանք բացահայտորեն առաջ են վազում: Բայց Սահ-
մանադրութիւնը կազմելիս պետք է յեղնել վո՛չ թե ապագայից,
այլ ներկայից, նրանից, ինչ վոր արդեն կա: Սահմանադրութիւ-
նը չի կարող և չպետք է առաջ վազի:

2) Այնուհետև դալիս է Սահմանադրութեան նախադիմումի տասն-
յոթերորդ հոդվածի վերաբերյալ ուղղումը: Ուղղումն այն է, վոր
առաջարկում են Սահմանադրութեան նախադիմումի բոլորովին դուրս
դրել տասնյոթերորդ հոդվածը, վորը խոսում է Միութենական
հանրապետութիւնների համար ԽՍՀՄ-ից ազատորեն դուրս դա-
լու իրավունք պահպանելու մասին: Յես կարծում եմ, վոր այդ
առաջարկը ճիշտ չէ, ուստի և չպետք է ընդունվի Համագումարի
կողմից: ԽՍՀՄ-ն իրավահավասար Միութենական հանրապետու-
թիւնների ազատակամ միութիւնն է: Սահմանադրութիւնից
հանել ԽՍՀՄ-ից ազատորեն դուրս դալու իրավունքի վերաբե-
րյալ հոդվածը, նշանակում է խախտել այդ Միութեան կամավոր
բնույթը: Կարո՞ղ ենք մենք դիմել այդ քայլին: Յես կարծում
եմ, վոր մենք չենք կարող և չպետք է դիմենք՝ այդ քայլին:
Ասում են, վոր ԽՍՀՄ-ում չկա վոչ մի հանրապետութիւն, վորը
ցանկանար դուրս դալ ԽՍՀՄ-ի կազմից, վոր այդ նկատառումով
տասնյոթերորդ հոդվածը դործնական նշանակութիւն չունի:
Վոր մեզ մոտ չկա վոչ մի հանրապետութիւն, վորը ցանկանար
դուրս դալ ԽՍՀՄ-ի կազմից, այդ, իհարկե, ճիշտ է: Բայց դրա-
նից բնավ չի հետևում, վոր մենք Սահմանադրութեան մեջ չպետք
է Ֆիլքսացիայի յենթարկենք Միութենական հանրապետութիւն-
ների իրավունքը՝ ազատորեն դուրս դալու ԽՍՀՄ-ից: ԽՍՀՄ-ում
չկա նաև այնպիսի Միութենական հանրապետութիւն, վորը ցան-

կանար ճնշել մի այլ Միութենական Հանրապետութեան: Բայց դրանից բնավ չի հետևում, վոր ԽՍՀՄ-ի Սահմանադրութեան հոդով պետք է դուրս հանվի Միութենական Հանրապետութեանը իր անկախութեան հավասարութեան մասին խոսող հոդով:

3) Ապա առաջարկ կա՝ Սահմանադրութեան նախագծի յերկրորդ դրուիքը լրացնել մի նոր հոդով, վորի բովանդակութեանն այն է, թե ավտոնոմ խորհրդային սոցիալիստական Հանրապետութեանը, տնտեսական և կուլտուրական զարգացման համապատասխան մակարդակի հասնելիս, կարող են վերափոխվել միութենական խորհրդային սոցիալիստական Հանրապետութեանը: Կարելի՞ յե արդյոք ընդունել այդ առաջարկը: Յես կարծում եմ, վոր չպետք է ընդունել այն: Այն ճիշտ չէ վո՛չ միայն իր բովանդակութեամբ, այլև իր պատճառարանութեանը: Չի կարելի ավտոնոմ Հանրապետութեանը կարգը՝ պատճառարանել նրանց տնտեսական ու կուլտուրական հասունութեամբ, ինչպես նաև չի կարելի այս կամ այն Հանրապետութեանն ավտոնոմ Հանրապետութեանը ցուցակում թողնելը պատճառարանել նրա տնտեսական և կուլտուրական հետամնացութեամբ: Դա կլինի մի մարքսիստական, վոչ լենինյան մոտեցում: Որինակ, Թաթարական Հանրապետութեանն ավտոնոմ է մնում, իսկ Ղազախական Հանրապետութեանը դառնում է միութենական, բայց այդ դեռ չի նշանակում, վոր Ղազախական Հանրապետութեանը կուլտուրական ու տնտեսական զարգացման տեսակետից ավելի բարձր է կանգնած, քան Թաթարական Հանրապետութեանը: Բոլորովին ընդհակառակը: Նույնը կարելի յե ասել նաև, որինակ, Մերձվոլգյան Գերմանացիների Ավտոնոմ Հանրապետութեան և Կիրգիզական Միութենական Հանրապետութեան մասին, վորոնցից առաջինը կուլտուրական ու տնտեսական տեսակետից ավելի բարձր է, քան յերկրորդը, թեպետև մնում է ավտոնոմ Հանրապետութեան:

Վորոնք են այն հատկանիշները, վորոնց առկայութեանը հիմք է տալիս ավտոնոմ Հանրապետութեանը միութենական Հանրապետութեանը կարգը փոխադրելու:

Դրանք, այդ հատկանիշները, յերեք են:

Նախ՝ անհրաժեշտ է, վոր Հանրապետութեանը ծայրերկրային լինի, ամեն կողմից շրջապատված չլինի ԽՍՀՄ-ի տերիտորիայով: Ինչո՞ւ: Վորովհետև յեթե Միութենական Հանրապետութեանն իրավունք է վերապահվում դուրս դալու ԽՍՀ Միութեանը,

այդ անհրաժեշտ է, վոր Միութենական դարձած այդ հանրապետութեանը հնարավորութեան ունենա տրամաբանորեն ու փաստորեն հարց դնել իր դուրս դալու մասին ԽՍՀՄ-ից: Իսկ այդպիսի հարց կարող է դնել միմիայն այնպիսի հանրապետութեան, վորը, ասենք, սահմանակից է վորեւէ ոտար պետութեան և, հետևաբար, ամեն կողմից շրջապատված չէ ԽՍՀՄ-ի տերիտորիայով: Իհարկէ, մեզ մոտ չկան այնպիսի Հանրապետութեաններ, վորոնք փաստորեն հարց դնելին ԽՍՀՄ-ից դուրս դալու մասին: Բայց քանի վոր Միութենական Հանրապետութեանն իրավունք է վերապահվում դուրս դալու ԽՍՀՄ-ից, ապա հարկավոր է գործն այնպես դնել, վոր այդ իրավունքը դատարկ և անիմաստ թղթի կտոր չդառնա: Վերցնենք, որինակ, Բաշկիրական կամ Թաթարական Հանրապետութեանը: Յենթապէս, թե այդ ավտոնոմ Հանրապետութեաններն անց ենք կացրել միութենական Հանրապետութեանը կարգը: Կկարողանայո՞ն արդյոք նրանք տրամաբանորեն կամ փաստորեն հարց դնել իրենց դուրս դալու մասին ԽՍՀՄ-ից: Վո՛չ, չեն կարողանա: Ինչո՞ւ: Վորովհետև նրանք բոլոր կողմերից շրջապատված են խորհրդային Հանրապետութեաններով ու մարզերով և նրանք, իսկպես ստած, տեղ չունեն ԽՍՀՄ-ի կողմից դուրս դալու: (Ընդհանուր ծիծաղ, ծափահարութեամբ): Այդ պատճառով էլ այդպիսի Հանրապետութեանները միութենական Հանրապետութեանները կարգն անցկացնելը սխալ կլինի:

Յերկրորդ, անհրաժեշտ է, վորպեսզի այն ազգութեանը, վոր խորհրդային Հանրապետութեանն իր անունն է տվել, թիչ թե շատ կոմպակտ մեծամասնութեան ներկայացնի Հանրապետութեան մեջ: Վերցնենք, որինակ, Ղրիմի Ավտոնոմ Հանրապետութեանը: Նա ծայրամասային Հանրապետութեան է, բայց Ղրիմի Թաթարները մեծամասնութեան չունեն այդ Հանրապետութեան մեջ, ընդհակառակը, նրանք այնտեղ փոքրամասնութեան են ներկայացնում: Հետևաբար, սխալ և անտրամաբանական կլինի Ղրիմի Հանրապետութեանը միութենական Հանրապետութեանների կարգն անցկացնել:

Յերրորդ, անհրաժեշտ է, վորպեսզի Հանրապետութեանը շատ էլ փոքր չլինի իր բնակչութեան քանակութեան իմաստով, վորպեսզի նա, ասենք, ունենա վոչ պակաս, այլ գոնե մի միլիոնից ավելի բնակչութեան: Ինչո՞ւ: Վորովհետև սխալ կլինի յենթադրել, թե մանր խորհրդային Հանրապետութեանը, վոր բնակչութեան նվազագույն քանակութեան և աննշան բանակ ունի,

կարող կլինեն պետական անկախ գոյութեան հույս ունենալ: Հազարի թե կարելի չէ կասկածել այն մասին, վոր իմպերիալիստական դիշատիչներն իսկույն ևեթ իրենց ձեռքը կզցեյին այն:

Յես կարծում եմ, վոր առանց այս յերեք որչեպիմ հատկանիշների առկայութեան, սխալ կլինեն ներկա պատմական մոմենտում հարց դնել այս կամ այն ավտոնոմ հանրապետութիւնը միութենական հանրապետութիւնների կարգն անցկացնելու մասին:

4) Այնուհետև առաջարկում են 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ հոդվածներում ջնջել միութենական հանրապետութիւնների վարչական-տերիտորիալ բաժանման մանրամասն թվարկումը յերկիրների և մարզերի: Յես կարծում եմ, վոր այդ առաջարկութիւնը նույնպես անընդունելի չէ: ԽՍՀՄ-ում կան մարզիկ, վորոնք պատրաստ են մեծ սիրով և անխնայ կերպով ձեռն-փոխել յերկիրներն ու մարզերը, դրանով խառնաշփոթութիւն և անվստահութիւն մտցնելով աշխատանքի մեջ: Մահաճանադրութեան նախադիժն այդ մտրդկանց համար սանձ է ստեղծում: Յեմ այդ շատ լավ է, վորովհետև այստեղ, ինչպես և շատ ուրիշ բաներում, մեզ մտ պահանջվում է վստահութեան միջոցով, պահանջվում է կայունութիւն, պարզութիւն:

5) Հինգերորդ ուղղումը վերաբերում է 33-րդ հոդվածին: Աննպատակահարմար են համարում յերկու պալատների ստեղծումը և առաջարկում են վոչնչացնել Ազգութիւնների Խորհուրդը: Յես կարծում եմ, վոր այդ ուղղումը նույնպես ճիշտ չէ: Միապալատային սիստեմն ավելի լավ կլինեն, քան յերկպալատայինը, յեթե ԽՍՀՄ-ն միասնական ազգային պետութիւն ներկայացնէ: Բայց ԽՍՀՄ-ն միասնական ազգային պետութիւն չէ: ԽՍՀՄ-ն, ինչպես հայտնի չէ, բազմազգ պետութիւն է: Մեզ մտ կա գերազույն մարմին, վորտեղ ներկայացված են ԽՍՀՄ-ի բոլոր աշխատավորների ընդհանուր շահերը՝ անկախ նրանց ազգութիւնից: Դա—Միութեան Խորհուրդն է: Բայց ԽՍՀՄ-ի ազգութիւնները, բացի ընդհանուր շահերից, ունեն նաև իրենց առանձին, յուրահատուկ շահերը, վորոնք կապված են նրանց ազգային առանձնահատկութիւնների հետ: Կարելի՞ չէ, արդյոք, արհամարհել այդ յուրահատուկ շահերը: Վո՞չ, չի կարելի: Պե՞տք է արդյոք հատուկ գերազույն մարմին, վորն արտացոլեր հենց այդ յուրահատուկ շահերը: Անպարման պետք է: Կասկած չի կարող լինել, վոր առանց այդպիսի մարմնի անհնարին կլինեն

այնպիսի բազմազգ պետութիւնը կառավարելը, ինչպիսին ԽՍՀՄ-ն է: Այդպիսի մարմին է հանդիսանում յերկրորդ պալատը, ԽՍՀՄ-ի Ազգութիւնների Խորհուրդը:

Մատնանշում են յեկրպական և ամերիկական պետութիւնների պառլամենտական պատմութիւնը, մատնանշում են այն, վոր յերկպալատային սիստեմն այդ յերկիրներում միայն միևնույն է տվել, վոր յերկրորդ պալատը սովորաբար աշխատեցվում-դառնում է ռեակցիայի կենտրոն և արգելակ առաջընթաց շարժման դեմ: Այս բոլորը ճիշտ է: Բայց դա տեղի չէ ունենում այն պատճառով, վոր այդ յերկիրներում պալատների միջև հավասարութիւն չկա: Ինչպես հայտնի չէ, յերկրորդ պալատին հաճախ ավելի իրավունքներ են տալիս, քան առաջինին, և, այնուհետև, վորպես կանոն, յերկրորդ պալատը կազմակերպվում է վոչ-դեմոկրատական ճանապարհով, հաճախ նրա անդամներին վերելից նշանակելու ճանապարհով: Անկասկած է, վոր այդ միևնույնը չեն լինի, յեթե հավասարութիւն մտցնենք պալատների միջև և յերկրորդ պալատը կազմակերպենք նույնպես դեմոկրատականորեն, ինչպես և առաջինը:

6) Այնուհետև առաջարկում են Մահաճանադրութեան նախադի մի լրացում, վորը պահանջում է յերկու պալատների անդամների քանակի հավասարեցում: Յես կարծում եմ, վոր այս առաջարկը կարելի կլինեն ընդունել: Դա, իմ կարծիքով, տալիս է ակներև քաղաքական սլոյաններ, վորովհետև ընդգծում է պալատների հավասարութիւնը:

7) Այնուհետև դալիս է Մահաճանադրութեան նախադի մի լրացում, վորի համաձայն առաջարկվում է Ազգութիւնների Խորհուրդի, ինչպես և Միութեան Խորհուրդի պատգամավորներին ընտրել ուղղակի ընտրութիւնների միջոցով: Յես կարծում եմ, վոր այս առաջարկը նույնպես կարելի կլինեն ընդունել: Ճիշտ է, դա կարող է ընտրութիւնների ժամանակ վորոշ տեխնիկական անհարմարութիւններ ստեղծել: Բայց դրա փոխարեն նա կտա քաղաքական մեծ շահում, վորովհետև նա պետք է բարձրացնի Ազգութիւնների Խորհուրդի հեղինակութիւնը:

8) Այնուհետև դալիս է 40-րդ հոդվածի լրացումը, վորի համաձայն առաջարկվում է Գերագույն Խորհուրդի Նախագահութեան իրավունք վերապահել հրատարակելու ժամանակավոր որենսդրական ակտեր: Յես կարծում եմ, վոր այս լրացումը ճիշտ չէ և Համագումարի կողմից չպետք է ընդունալի: Հարկավոր է, վերջապես, վերջ դնել այն դրութեանը, յերբ որենսդրութիւն է անում

վո՛չ թե վորևե մի մարմին, այլ մարմինների մի ամբողջ շարք: Այդպիսի դրուժյունը հակասում է որենքների կայունության սկզբունքին: Իսկ որենքների կայունությունն այժմ մեզ պետք է ավելի, քան յերբևե: ԽՍՀՄ-ում որենադիր իշխանությունը պետք է իրականացվի միայն մի մարմնի, այն է՝ ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի կողմից:

9) Այնուհետև Սահմանադրության նախագծի 48-րդ հոդվածի նկատմամբ առաջարկում են մի լրացում, վորի համաձայն պահանջում են, վորպեսզի ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահն ընտրվի վո՛չ թե ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի, այլ յերկրի ամբողջ բնակչության կողմից: Յես կարծում եմ, վոր այս լրացումը ճիշտ չէ, վորովհետև չի համապատասխանում մեր Սահմանադրության վուղուն: Ըստ մեր Սահմանադրության սխտեմի՝ ԽՍՀՄ-ում չպետք է լինի ամբողջ բնակչության կողմից, Գերագույն Խորհրդի հետ միահավասար, ընտրվող միանձնյա նախագահ, վորը կարողանար իրեն հակադրել Գերագույն Խորհրդին: ԽՍՀՄ-ում նախագահը կուեզիալ է, դա—Գերագույն Խորհրդի Նախագահությունն է՝ ներառյալ նաև Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահին, վորին ընտրում է վո՛չ թե ամբողջ բնակչությունը, այլ Գերագույն Խորհուրդը և վորը հաշվետու յե Գերագույն Խորհրդին: Պատմության փորձը ցույց է տալիս, վոր գերագույն մարմինների այսպիսի կառուցումն ամենից ավելի դեմոկրատական է, վորն ապահովում է յերկիրն անցանկալի պատահականություններից:

10) Այնուհետև գալիս է մի ուղղում նույն այդ 48-րդ հոդվածի նկատմամբ: Դա ասում է. ավելացնել ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահի տեղակալների քանակը մինչև 11, այն հաշվով, վորպեսզի յուրաքանչյուր Միութենական հանրապետությունից մի տեղակալ լինի: Յես կարծում եմ, վոր այս ուղղումը կարելի կլինեն ընդունել, վորովհետև դա լավացնում է գործը և կարող է միայն ամրապնդել ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի Նախագահության հեղինակությունը:

11) Այնուհետև գալիս է ուղղում 77-րդ հոդվածի վերաբերյալ: Դա պահանջում է կաղմակերպել մի նոր համամիութենական ժողովրդական կոմիտարիատ՝ Պաշտպանության Արդյունաբերության Ժողովմատ: Յես կարծում եմ, վոր այս ուղղումը նույնպես հարկավոր է ընդունել (ծափահարություններ), վորովհետև հասել է ժամանակն այն բանի համար, վոր առանձնացնենք

մեր պաշտպանության արդյունաբերությունը և համապատասխան ժողովմատային ձևավորում տանք նրան: Ինձ թվում է, վոր դա միայն կարող է բարելավել մեր յերկրի պաշտպանության դործը:

12) Այնուհետև գալիս է Սահմանադրության նախագծի 124-րդ հոդվածի վերաբերյալ մի ուղղում, վորը պահանջում է փոփոխել այդ հոդվածն այն ուղղությամբ, վորպեսզի արդելի կրոնական ծեսերի կատարումը: Յես կարծում եմ, վոր այս ուղղումը հարկավոր է մերժել, վորպես մեր Սահմանադրության վուղուն չհամապատասխանող:

13) Վերջապես դարձյալ մեկ ուղղում, վորն ավելի կամ պակաս եյական բնույթ ունի: Յես խոսում եմ Սահմանադրության նախագծի 135-րդ հոդվածի վերաբերյալ ուղղման մասին: Այդ ուղղումն առաջարկում է ընտրական իրավունքներից զրկել պաշտամունքի սպասավորներին, նախկին սպիտակ դվարդիականներին, բոլոր այն նախկին մարդկանց ու անձնավորություններին, վորոնք հանրողուտ աշխատանքով չեն զբաղվում, կամ թե, համենայն դեպս, —սահմանափակել այդ կատեգորիայի անձնավորություններին ընտրական իրավունքները, տալով նրանց միայն ընտրելու, բայց վոչ ընտրվելու իրավունք: Յես կարծում եմ, վոր այս ուղղումը նույնպես պետք է մերժվի: Խորհրդային իշխանությունը վոչ-աշխատավորական և շահագործող տարրերին ընտրական իրավունքներից զրկել է վո՛չ թե հավիտենապես, այլ ժամանակավորապես, մինչև վորոչ ժամանակաշրջան: Կար ժամանակ, յերբ այդ տարրերը բացահայտ պատերազմ էյին մղում ժողովրդի դեմ և հակադրոժում էյին խորհրդային որենքներին: Նրանց ընտրական իրավունքից զրկելու վերաբերյալ խորհրդային որենքը Խորհրդային իշխանության պատասխանն էր այդ հակադրոժությանը: Այդ շրջանից քիչ ժամանակ չի անցել: Անցած ժամանակաշրջանում մենք հասանք այն բանին, վոր շահագործող դասակարգերը վոչնչացված են, իսկ Խորհրդային իշխանությունը դարձել է անհաղթելի ուժ: Արդյոք չի՞ հասել ժամանակը վերանայելու այդ որենքը: Յես կարծում եմ, վոր ժամանակը հասել է: Ասում են, թե դա վտանգավոր է, քանի վոր յերկրի գերագույն մարմինների մեջ կարող են սողոսկել Խորհրդային իշխանության թշնամի տարրեր, նախկին սպիտակ-դվարդիականներից, կուլակներից, տերտերներից վոմանք և այլն: Բայց իսկապես այստեղ ի՞նչ կա վախենալու: Գայլերից վախեցողն անտառ չպետք է գնա: (Ուրախ աշխուժություն դախիմում, բուռն

ծափահարություններ) : Նախ՝ Խորհրդային իշխանությանը թըշնամի յեն վոչ բոլոր նախկին կուլակները, սպիտակ-զվարդիականները կամ տերտերները : Յերկրորդ՝ յեթե ժողովուրդը տեղտեղ թշնամի մարդիկ ընտրի ել, ապա այդ կնչանակի, վոր մեր ազիտացիոն աշխատանքը չայից դուրս վատ ե դրված ե վոր մենք լիովին արժանի եյինք այդպիսի խայտառակության . իսկ յեթե մեր ազիտացիոն աշխատանքը բոլջևիկորեն ընթանա, ապա ժողովուրդը չի թողնի, վոր իր դերադույն մարմինների մեջ թըշնամի մարդիկ մտնեն : Նշանակում ե՝ հարկավոր ե աշխատել ե վոչ թե նվնվալ (բուռն ծափահարություններ), հարկավոր ե աշխատել ե վոչ թե սպասել, վոր ամեն ինչ տրամադրվի պատրաստի ձևով, վարչական կարգադրությունների կարգով : Լենինը դեռ 1919 թվին ասում եր, վոր հեռու չե այն ժամանակը, յերբ Խորհրդային իշխանությունն ոգտակար կհամարի մտցնելու ընդհանուր ընտրական իրավունք՝ առանց վորևե սահմանափակման : Ուշադրություն դարձրեք՝ առանց վորևե սահմանափակման : Այդ նա ասել ե այն ժամանակ, յերբ ոտարեկրյա ռազմական ինտերվենցիան դեռ վերացված չեր, իսկ մեր արգելանքներությունը ե դյուղատնտեսությունը սոսկալի դրության մեջ եյին գտնվում : Այդ ժամանակից ի վեր անցել ե արդեն 17 տարի : Ժամանակը չե՞ արդյոք, ընկերներ՝, կատարելու Լենինի ցուցումը : Յես կարծում եմ, վոր ժամանակն ե :

Ահա թե ինչ եր ասում Լենինը 1919 թվին «ՌԿ(բ)Կ ծրագրի նախագիծ» իր աշխատության մեջ : Թույլ տվեք կարգալ .

«Անցողիկ պատմական կարիքները սխալ կերպով ընդհանրացնելուց խուստիելու համար՝ ՌԿ(բ)Կ պետք ե պարզաբանի աշխատավոր մասսաներին, վոր քաղաքացիների մի մասին ընտրական իրավունքներից զրկելը Խորհրդային հանրապետության մեջ բնավ չի վերաբերում, —ինչպես այդ լինում եր բուրժուա-դեմոկրատական հանրապետությունների մեծամասնության մեջ, —ցմահ իրավազուրկ հայտարարվող վորոշ կարգի քաղաքացիների, այլ վերաբերում ե միայն շահագործողներին, միայն նրանց, ովքեր՝ հակառակ սոցիալիստական Խորհրդային հանրապետության հիմնական որենքների, համառում են իրենց շահագործողական դրության պաշտպանության գործում, կապիտալիստական հարաբերությունների պահպանման գործում : Հետևաբար, Խորհրդային հանրապետության մեջ, մեկ

կողմից, սոցիալիզմի որ-ավուր ամբապնդվելու ե շահագործող մնալու կամ կապիտալիստական հարաբերությունները պահպանելու որչեկտիվ հնարավորություն ունեցող մարդկանց թիվը որ-ավուր կրճատվելու հետ միասին ինքնին պակասում ե ընտրական իրավունքից զրկվողների տոկոսը : Այդ տոկոսը Ռուսաստանում այժմ հազիվ թե յերկու-յերեք տոկոսից ավելի լինի : Մյուս կողմից, արտաքին հարձակումը դադարեցնելու ե եքսպրոպրիատորների եքսպրոպրիացիայի ավարտելն ամենամոտիկ ապագայում կարող ե, վորոշ պայմաններում, ստեղծել այնպիսի դրություն, յերբ պրոլետարական պետական իշխանությունը կընտրի շահագործողների զիմադրության ճնշման այլ յեղանակներ ե կմտցնի ընդհանուր ընտրական իրավունք՝ առանց վորևե սահմանափակման : (Լենին, հատոր XXIV, եջ 94, Կուսհրատի հրատարակություն, 1935 թ.) :

Թվում ե, թե պարզ ե :

Այսպես ե դործը ԽՍՀՄ-ի Սահմանադրության նախադէ չուրջն արված ուղղումների ե լրացումների նկատմամբ :

VI

ԽՍՀՄ-Ի ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դատելով համարյա հինգ ամիս տևող համաժողովրդական քննարկման արդյունքներից, կարելի չե յենթադրել, վոր Սահմանադրության նախագիծը հավանություն կդառնի ներկա Համագումարի կողմից: (Բուռն ծափահարություններ, վորոք փոխարկվում են ովացիայի: Դահլիճը վառվի յե կանգնում):

Մի քանի օրից Խորհրդային Միությունը կունենա նոր, ծավալուն սոցիալիստական դեմոկրատիզմի սկզբունքների վրա կառուցված սոցիալիստական Սահմանադրություն:

Դա կլինի մի պատմական փաստաթուղթ, վորը պարզ ու սեղմ, համարյա արձանագրական վոճոյվ, կխոսի ԽՍՀՄ-ում սոցիալիզմի տարած հաղթության փաստերի մասին, կապիտալիստական ստրկությունից ԽՍՀՄ-ի աշխատավորների ազատազորման փաստերի մասին, ԽՍՀՄ-ում ծավալուն, մինչև վերջը հետևողական դեմոկրատիայի հաղթության փաստերի մասին:

Դա կլինի մի փաստաթուղթ, վոր կվկայի, թե այն, ինչի մասին յերազեղ են և շարունակում են յերազեղ միլիոնավոր աղանիվ մարդիկ կապիտալիստական յերկիրներում, — արդեն իրականացվել և ԽՍՀՄ-ում: (Բուռն ծափահարություններ):

Դա կլինի մի փաստաթուղթ, վորը կվկայի, թե այն, ինչ վոր իրականացված է ԽՍՀՄ-ում, լիովին կարող է իրականացվել նաև մյուս յերկիրներում: (Բուռն ծափահարություններ):

Բայց դրանից հետևում է, վոր ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության միջազգային նշանակությունը հազիվ թե կարելի լինի դեբադնահատել:

Այժմ, յերբ Փաշիզմի պղտոր ալիքը լուտանք է թափում բանվոր դասակարգի սոցիալիստական շարժման վրա և ցեխի հետ է խառնում քաղաքակիրթ աշխարհի լավագույն մարդկանց

դեմոկրատական ճգնումները, ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրությունը մի մեղադրական ախտ կլինի Փաշիզմի դեմ, մի ախտ, վորն ասում է, թե սոցիալիզմը և դեմոկրատիան անպարտելի յեն: (Ծափահարություններ): ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրությունը բարոյական ոգնություն և իրական ոժանդակություն կլինի բոլոր նրանց համար, ովքեր այժմ կռիվ են մղում Փաշիստական բարբարոսության դեմ: (Բուռն ծափահարություններ):

Ե՛լ ալելի մեծ նշանակություն ունի ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրությունը ԽՍՀՄ-ի ժողովուրդների համար: Յեթե կապիտալիստական յերկիրների ժողովուրդների համար ԽՍՀՄ-ի Սահմանադրությունը կունենա դորժողությունների ծրագրի նշանակություն, ապա ԽՍՀՄ-ի ժողովուրդների համար նա ունի իրենց պայքարի հանրագումարի նշանակություն, մարդկության ազատազրման ճակատում նրանց տարած հաղթությունների հանրագումարի նշանակություն: Վորպես արդյունք պայքարի ու զորկանքների անցած ուղու՝ հաճելի ու բերկրալի յե ունենալ իր սեփական Սահմանադրությունը, վորը խոսում է մեր հաղթությունների պտուղների մասին: Հաճելի ու բերկրալի յե դիտենալ, թե ինչի համար են մարտնչել մեր մարդիկ և ինչպես են ձեռք բերել նրանք համաշխարհային-պատմական հաղթությունը: Հաճելի ու բերկրալի յե դիտենալ, վոր մեր մարդկանց առատորեն թափած արյունը ազարդյուն չի անցել, վոր այդ արյունն իր արդյունքներն է տվել: (Յերկարատև ծափահարություններ): Դա հոգեպես զինում է մեր բանվոր դասակարգին, մեր դյուզացիությունը, մեր աշխատավոր ինտելիգենցիային: Դա առաջ է շարժում և բարձրացնում է օրինական հպարտության զգացմունքը: Դա ամրապնդում է հավատը դեպի մեր ուժերը և մոբիլիզացիայի յե յենթարկում նոր պայքարի՝ կոմունիզմի նորանոր հաղթություններ նվաճելու համար: (Բուռն ովացիա: Ամբողջ դահլիճը վառվի յե կանգնում: Վորոտալից «ուռա»: Ընդհանուր բացականչություններ՝ «Կեցցե՛ր ընկեր Ստալինը»: Համագումարը հուրընկայս յերգում է «Ինտերնացիոնալը»: «Ինտերնացիոնալը» յերգելուց հետո ովացիան վերսկսվում է: Բացականչություններ՝ «Ուռա՛», «Կեցցե՛ր մեր առաջնորդ ընկեր Ստալինը»):

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐԻ
VIII ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ԸՆԿԵՐ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

5 դեկտեմբերի 1936 թ.

Պատգամավորները փոքորկալից ովացիայով են դիմավորում
ընկ. ՍՏԱԼԻՆԻՆ. հնչում են բացականչություններ՝ «Ուռա՛ ըն-
կեր ՍՏԱԼԻՆԻՆ», «Կեցցե՛ ընկեր ՍՏԱԼԻՆԸ», «Կեցցե՛ մեր սի-
րելի ընկեր ՍՏԱԼԻՆԸ», «Կեցցե՛ նոր Սահմանադրութունն ստեղ-
ծագործող ընկեր ՍՏԱԼԻՆԸ», «Կեցցե՛ Ստալինյան Սահմանա-
դրութունը: Ուռա՛»:

Ընկերնե՛ր: Խմբադրական Հանձնաժողովն ալարտեց իր աշ-
խատանքը: Վորպես արդյունք Խմբադրական Հանձնաժողովի աշ-
խատանքի՝ ստացվեց Սահմանադրության վերջնական տեքստի
նախագիծը: Նախագիծը բաժանված է Համագումարի բոլոր ան-
դամներին: Հետևաբար, Համագումարը ծանոթ է դրան:

Ինչպես յերևում է նախագիծից, Խմբադրական Հանձնաժողովը
մտցրեց ընդամենը 43 ուղղում: Այդ ուղղումները վերաբերեցին
Սահմանադրության նախագծի 32 հոդվածներին, մտցնելով նրանց
մեջ այս կամ այն փոփոխությունները: Նախագիծ մնացած 114
հոդվածները մնացին անփոփոխ:

43 ուղղումներից քիչ թե շատ եյական կարելի յեր ընդունելը
վեց կամ յոթն ուղղում:

Ի՞նչ ուղղումներ են դրանք:

Նախ և առաջ՝ ուղղում 8-րդ հոդվածի վերաբերմամբ:
Սահմանադրության նախագծում հոդվածը ձևակերպված է այս-
պես.

«Կոլանտեսությունների զբաղեցրած հողն ամրացվում է
նրանց՝ անժամկետ ոգտադործելու համար, այսինքն՝ առհա-
վետ»:

Նոր ձևակերպումը տալիս է հոդվածի հետևյալ տեքստը.

«Կոլանտեսությունների զբաղեցրած հողն ամրացվում է
նրանց՝ անվճար և անժամկետ ոգտադործելու համար, այսինքն՝
առհավետ»:

Յես կարծում եմ, վոր այս ուղղումը պարզ է և բացատրու-
թյան կարիք չի դրում:

Յերկրորդ ուղղումը վերաբերում է Սահմանադրության նա-
խագծի 10-րդ հոդվածին: Այդ հոդվածի հին ձևակերպումն է.

«Քաղաքացիների անձնական սեփականությունը՝ նրանց աշ-
խատանքային յեկամուտների ու խնայողությունների նկատմամբ,
բնակելի տան և ոժանդակ տնային տնտեսության նկատմամբ,
տնային տնտեսության և գործածության առարկաների նկատ-
մամբ, ինչպես նաև անձնական սպառման ու հարմարության ա-
ռարկաների նկատմամբ, պահպանվում է որենքով»:

10-րդ հոդվածի նոր ձևակերպումը.

«Քաղաքացիների անձնական սեփականության իրավունքը՝

նրանց աշխատանքային յեկամուտներն ու խնայողություններն նկատմամբ, բնակելի տան և տնային ոժանդակ տնտեսության նկատմամբ, տնային տնտեսության և առորյա գործածության առարկաների նկատմամբ, անձնական սպառման ու հարմարության առարկաների նկատմամբ, ինչպես նաև ֆազաֆաջիների անձնական սեփականության ժառանգման իրավունքը, պահպանվում են որենքով»:

Այս ուղղումը պարզ է և, յես կարծում եմ, հատուկ բացատրության կարիք չի զգում:

Յերրորդ ուղղումը վերաբերում է 35-րդ հոդվածին: Այդ հոդվածի հին ձևակերպումն է.

«Ազգությունների Սորհուրդը կազմվում է այն պատգամավորներից, վորոնց ընտրում են միութենական ու ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Սորհուրդները և ավտոնոմ մարզերի աշխատավորության պատգամավորների Սորհուրդները՝ տասական պատգամավոր յուրաքանչյուր միութենական հանրապետությունից, հնգական պատգամավոր յուրաքանչյուր ավտոնոմ հանրապետությունից և յերկուական պատգամավոր յուրաքանչյուր ավտոնոմ մարզից»:

Այդ հոդվածի նոր ձևակերպումն է.

«Ազգությունների Սորհուրդն ընտրում են ԽՍՀՄ-ի ֆազաֆաջիներն ըստ միութենական և ավտոնոմ հանրապետությունների, ավտոնոմ մարզերի ու ազգային ոկրուգների, հետևյալ նորմայով. քանի՞նգական պատգամավոր յուրաքանչյուր միութենական հանրապետությունից, տասնմեկական պատգամավոր յուրաքանչյուր ավտոնոմ հանրապետությունից, հնգական պատգամավոր յուրաքանչյուր ավտոնոմ մարզից և մեկական պատգամավոր յուրաքանչյուր ազգային ոկրուգից»:

Հետևաբար, այս հոդվածում պայտաների հավասարությունը թե՛ նրանց քանակական կազմի և թե՛ նրանց ղեմնկրատական կառուցման իմաստով՝ լրիվ պահպանված է:

Չորրորդ ուղղումը վերաբերում է 40-րդ հոդվածին: Հոդվածի հին ձևակերպումն է.

«ԽՍՀՄ-ի Գերագույն Սորհրդի ընդունած որենքները հրապարակվում են ԽՍՀՄ-ի Գորագույն Սորհրդի Նախագահության Նախագահի և քարտուղարի օտորագրությամբ»:

Հոդվածի նոր ձևակերպումը.

«ԽՍՀՄ-ի Գերագույն Սորհրդի ընդունած որենքները հրապարակվում են միութենական հանրապետությունների լեգումներով,

ԽՍՀՄ-ի Գերագույն Սորհրդի Նախագահության Նախագահի և քարտուղարի օտորագրությամբ»:

Ուղղումը հասկանալի յես և այն, իմ կարծիքով, նույնպես բացատրության կարիք չի զգում:

Հետևաբար, որենքները հրապարակվելու յեսն 11 լեզվով:

Հինգերորդ ուղղումը վերաբերում է 48-րդ հոդվածին: Հինգ ձևակերպումով նախատեսվում էր Գերագույն Սորհրդի Նախագահության Նախագահի չորս տեղակալ, նոր ձևակերպումով նախատեսվում է 11 տեղակալ՝ ըստ միութենական հանրապետությունների թվի:

Վեցերորդ ուղղումը վերաբերում է 77-րդ հոդվածին: Այդ ուղղումն այն է, վոր բացի գոյություն ունեցող համամիութենական ժողկոմատներից, յեսնթաղվում է կազմել մի նոր ժողկոմատ ևս՝ պաշտպանության արդյունաբերության ժողկոմատ: Այդ ուղղումը նույնպես բացատրության կարիք չի զգում:

Վերջապես, յոթերորդ ուղղումը: Այն վերաբերում է 49-րդ հոդվածի «կ» կետին: Հոդվածի հին ձևակերպումն է:

«ԽՍՀՄ-ի Գերագույն Սորհրդի նստաչըջանների միջև ընկած ժամանակաչըջանում Նախագահությունը պատերազմի վիճակ է հայտարարում ԽՍՀՄ-ի վրա ռազմական հարձակում կատարվելու դեպքում»:

Հոդվածի նոր ձևակերպումը.

«ԽՍՀՄ-ի Գերագույն Սորհրդի նստաչըջանների միջև ընկած ժամանակաչըջանում Նախագահությունը պատերազմի վիճակ է հայտարարում ԽՍՀՄ-ի վրա ռազմական հարձակում կատարվելու դեպքում, կամ այն դեպքում, յերբ անհրաժեշտ է կատարել ագրեսիայից փոխադարձաբար պաշտպանվելու միջազգային պայմանագրային պարտավորություններ»: (Բուռն ծափահարություններ):

Ինչ վերաբերում է մյուս ուղղումներին, ապա դրանք եյական նշանակություն չունեն, զուտ խմբազրական բնույթ են կրում և, յես կարծում եմ, հատուկ քննության կարիք չեն զգում:

Ընդհանուր հետևությունը. ԽՍՀՄ-ի Սահմանադրությունը մշակելու և վերջնականապես հղկելու գործում համաժողովրդական քննարկումն անկասկած հսկայական ոգուտ բերեց: (Յերկարտու նվազիս ընկեր Ստալինի հասցեյին, ամբողջ դախի՞նում վաղույնի բացականչություններ են յավում ի պատիվ ընկեր Ստալինի՝ «Ուռա՛ ընկեր Ստալինին, ուռա՛»):

4074

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Ընկեր Ի. Վ. Ստալինի գեկուցումը հորհուրդների VIII համաժողովի
թեմական արտակարգ համագումարում ԽՍՀ Միության Սահմանադրության
նախագծի մասին, 25 նոյեմբերի 1936 թ.

I
Սահմանադրական Հանձնաժողովի կազմումը և նրա խնդիրները 7

II
1924 թ-վից մինչև 1936 թ-վին ընկած ժամանակաշրջանում ԽՍՀՄ-ի կյանքում տեղի ունեցած փոփոխությունները 9

III
Սահմանադրության նախագծի հիմնական առանձնահատկությունները 18

IV
Սահմանադրության նախագծի բուրժուական բնույթի և փոփոխությունները 24

V
Ուղղումներ և լրացումներ Սահմանադրության նախագծի վերաբերյալ 33

VI
ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության նշանակությունը 46
ԽՍՀ Միության հորհուրդների VIII արտակարգ համագումարի հմրագրական Հանձնաժողովի նախագահ ընկ. Ի. Վ. Ստալինի գեկուցումը 5 դեկտեմբերի 1936 թ. 48



ԳԻՆԸ 30 Կ.

580

И. В. СТАЛИН

Доклад о проекте
Конституции Союза ССР

Армпартиздат, Ереван, 1937